Ակտ

22.04.2011թ. **գ. Վահագնաձոր**

Լոռու մարզի համայնքներում 2011թ. ֆինանսական եւ վարչական հսկողություն իրականացնելու աշխատանքային ծրագրի համաձայն(ՀՀ տարածքային կառավարման նախարարի 2011թ. փետրվարի 14-ի թիվ 20 հրաման, ՀՀ Լոռու մարզպետի 2011թ. փետրվարի 23-ի թիվ 68 կարգադրություն), մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության պետի տեղակալ Լ. Բերոյանս, իրավաբանական բաժնի պետ Ա. Սահակյանս, ՏԻ և ՀԳՄ հարցերով վարչության ՏԻ և համայնքային ծառայության հարցերի բաժնի պետ Ժ. Ղազարյանս, ՏԻ և ՀԳՄ հարցերով վարչության հանրապետական գործադիր մարմինների տարածքային ստորաբաժանումների գործունեության համակարգման բաժնի պետ Վ. Հովհաննիսյանս, ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության ֆինանսատնտեսագիտական բաժնի գլխավոր մասնագետ Ա. Բեջանյանս Վահագնաձորի գյուղապետարանում կատարեցինք ֆինանսական և վարչական ստուգում:

Ստուգման աշխատանքներին մասնակցում էին Վահագնաձոր համայնքի ղեկավար Է. Եղոյանը, աշխատակազմի քարտուղար՝ Ի. Ավետյանը, հաշվապահ՝ Ս. Խառատյանը:

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ

ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ

2010թ. բյուջեով նախատեսված 4594.4 հազ. դրամ եկամուտների դիմաց փաստացի մուտքերը կազմել են 4460.2 հազ. դրամ, կամ կատարվել են 97.1%-ով: Սեփական եկամուտները նախատեսված 1094.4 հազ. դրամի դիմաց կազմել է 960.2 հազ. դրամ, կամ հավաքագրումը կազմել է 87.7%:

Սեփական եկամուտների գծով թերակատարվել են հողի հարկի, գույքահարկի, տեղական տուրքի և պահուստային հողերի գանձման ցուցանիշները:

2011թ. ապրիլի 1-ի դրությամբ համայնքի բյուջեի եկամուտները կատարվել է 62.9%-ով, այդ թվում սեփական եկամուտները հավաքագրումը կազմում է 11.9 %-ով: Նախատեսված 636.0 հազ. դրամի դիմաց փաստացի գանձվել է 75.7 հազ. դրամ, կամ պակաս է գանձվել 560.3 հազ. դրամ:

(հազ. դրամ)

Բյուջեի եկամուտներ	**2010թվական**			**Առ 01.04.2011թ.**		
	Նախա-տեսված է	Փաստա-ցի	%	Նախա-տեսված է	Փաստա-ցի	%
ՎԱՐՉԱԿԱՆ ԲՅՈՒՋԵ	**4594.4**	**4460.2**	**97.1**	**1511.0**	**950.7**	**62.9**
Հողի հարկ	347.8	297.9	85.7	261.0	33,0	12.6
Գույքահարկ	616.6	586.9	95.1	320.0	38.7	12.1
Տեղական տուրք	80.0	33.0	41.2	40.0	-	-
Պահուստային հողերի վարձակալություն	50.0	42.4	84.8	15.0	-	-
Այլ մուտքեր				-	4,0	-
Ընդամենը սեփական եկամուտներ	**1094.4**	**960.2**	**87.7**	**636,0**	**75,7**	**11.9**
Պետական բյուջից տրվող դոտացիա	3500.0	3500.0	100.0	875.0	875.0	100.0
ՖՈՆԴԱՅԻՆ ԲՅՈՒՋԵ	-	-	-	-	-	-
ԸՆԴԱՄԵՆԸ	**4594.4**	**4460.2**	**97.1**	**1511.0**	**950.7**	**62.9**

Համաձայն հաստատված բյուջեի մեկ տարվա հողի հարկի հաշվարկը կազմում է 306.0 հազ. դրամ, գույքահարկը՝ 524.1 հազ. դրամ: Նախորդ տարիներին համայնքի բյուջեի պարբերաբար թերակատարման հետևանքով կուտակվել են ապառքներ, որոնք 01.01.2011թ. դրությամբ կազմում են հողի հարկից՝ 150.0 հազ. դրամ, գույքահարկից՝ 371.9 հազ. դրամ (շինություններից՝ 160.4 հազ. դրամ, փոխադրամիջոցներից՝ 211.5 հազ. դրամ): Մեր կողմից համայնքի ղեկավարին առաջարկվել է ապառք ունեցողների հետ կնքել պարտքերի մարման ժամանակացույց, կամ գումարները գանձել դատական կարգով:

Հողի օտարումներից մուտքերը 2010թ. կազմել են 1283.7 հազ. դրամ, 2011թ. ապրիլի 1-ի դրությամբ՝ 25.0 հազ. դրամ:

Համայնքի տարածքում ստուգման պահին փաստացի գործում էր երկու մթերային խանութ, չորս հանրային սննդի օբյեկտ և մեկ բենզալցակայան: 2010թ. նախատեսված 80.0 հազ. դրամի դիմաց փաստացի գանձվել է 33.0 հազ. դրամ: 2011թ.-ին ալկահոլային խմիչքների վաճառքի թույլտվության համար սահմանվել է տեղական տուրք եռամյակը 12500 դրամ, ծխախոտի վաճառքի թույլտվության համար եռամյակը 12500 դրամ, հեղուկ վառելիքի վաճառքի թույլտվության համար տարեկան 250000 դրամ:

2011թ. ապրիլի 1-ի դրությամբ տեղական տուրք ընդհանրապես չի գանձվել, կամ տնտեսվարող սուբյեկտները չունենալով վաճառքի համապատասխան թույլտվություն վարել են և հիմա էլ վարում են անօրինական գործունեություն:

Ընդունված կարգի համաձայն համայնքի ղեկավարը իրավասու է առեւտրի օբյեկտներում կատարել ստուգումներ և անօրինական գործունեության համար նշանակել համապատասխան տուգանքներ: Մասնավորապես <<Վարչական իրավախախտումների մասին>> ՀՀ օրենքի 169 հոդվածի համաձայն առևտրի, հանրային սննդի և կենցաղային ծառայությունների ոլորտում առանց համապատասխան թույլտվության գործունեության իրականացումը առաջացնում է տուգանք ոգելից խմիչքների և ծխախոտի վաճառքի համար՝ 20000-50000 դրամ:

Առեւտրի և ծառայությունների ոլորտում համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 40-րդ հոդվածի եւ «Առեւտրի ու ծառայությունների մասին» ՀՀ օրենքի 17.1 հոդվածի պետք է իրականացվել համապատասխան հսկողություն, որը սակայն չի կատարվել:

ԲՅՈՒՋԵԻ ԾԱԽՍԵՐ

Դրամարկղային ծախսերը 2010թ. կազմել են 5552.6 հազ. դրամ, այդ թվում՝ աշխատավարձ և հավելավճարներ՝ 2749.4 հազ. դրամ, սոցիալական ապահովության վճարներ՝ 594.2 հազ. դրամ, համակարգչային ծառայություններ՝ 354.0 հազ. դրամ, գրասենյակային նյութեր՝ 100.0 հազ. դրամ, տրանսպորտային նյութեր՝ 200.0 հազ. դրամ, սոցիալական օգնություններ՝ 420,0 հազ. դրամ, վարչական սարքավորումներ՝ 1135.0 հազ. դրամ:

2011թ. ապրիլի 1-ի դրությամբ դրամարկղային ծախսերը կազմել են 895.1 հազ. դրամ, այդ թվում՝ աշխատավարձ և հավելավճարներ՝ 714.0 հազ. դրամ, սոցիալական ապահովության վճարներ՝ 155.1 հազ. դրամ, այլ ծախսեր՝ 26.0 հազ. դրամ:

Հաշվապահական հաշվառումը տարվում է թերություններով: Կատարված գործարքներին չեն տրվում համապատասխան ձևակերպումներ: Աշխատանքի հաճախումների տաբելները լրացվում են թերություններով:

Գանձապահի պարտականությունը իրականացնում է հաշվապահը, կամ խախտվել է <<Դրամարկղային գործառնությունների մասին >> ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի կետ 3-ի պահանջը, համաձայն որի <<գանձապահի պարտականությունները չեն կարող դրվել կազմակերպության այն աշխատակիցների վրա, որոնք իրավունք ունեն ստորագրելու դրամարկղային փաստաթղթեր>>:

Աշխատավարձերի հաշվարկների ստուգմամբ պարզվեց, որ աշխատակազմի քարտուղար Ի. Ավետյանը 2011թ. հունվարին 4 օր գտնվել է հերթական արձակուրդում, որի համար նրան վճարվել է արձակուրդային վճար: Հունվար ամսին նրան պետք է հաշվարկվեր 4 օր պակաս աշխատավարձ, սակայն հաշվարկվել է լրիվ ամսվա աշխատավարձ կամ ավել է հաշվարկվել 16333 դրամ:

Գնումների գործընթացը օրենքի պահանջներին համապատասխան վարելու համար համայնքի ղեկավարի կարգադրությամբ չի նշանակվել գնումները համակարգող անձ:

ՎԱՐՉԱԿԱՆ ՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ

ԱՎԱԳԱՆՈՒ ԻՐԱՎԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ

2010 թվականի ընթացքում Վահագնաձոր համայնքի ավագանին կայացրել է 26 նիստ, ընդունել է 29 որոշում: Պետք է նշել, որ նիստերը անց են կացվել գրեթե 2 շաբաթը մեկ՝ քննարկելով մեկական հարցեր, ինչպես նաև մեկ օրում կայացվել է երկու նիստ: Անհրաժեշտ է հետևողականորեն մոտենալ նիստերի օրակարգերի կազմմանը:

2010թվականի ընթացքում ավագանին իր իրավասությունների սահմաններում.

-հաստատել է 2010թվականի և 2011թվականի համայնքի բյուջեները.

-հաստատել է 2010թ. բյուջեի՝ համայնքի ղեկավարի առաջարկած փոփոխությունները.

-հաստատել է 2009թ. բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունը.

-հաստատել է առևտրի, հասարակական սննդի և սպասարկման ոլորտի գործունեության համայնքային կանոնները.

-2010թվականի և 2011թվականի համար սահմանել է տեղական տուրքերի և վճարների տեսակներն ու դրույքաչափերը.

-համայնքի ղեկավարի առաջարկությամբ որոշում կայացնելու փոխարեն հավանության է արժանացրել համայնքի ղեկավարի որոշմանը համայնքի սեփականություն համարվող գույքն օգտագործման տրամադրելու և օտարելու մասին, հաստատել է դրանց մեկնարկային գները.

-հաստատել է համայնքի ղեկավարի աշխատակազմի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը.

-հաստատել է համայնքային սեփականության գույքագրման փաստաթղթերը.

Համայնքի ավագանու քննարկմանը չի ներկայացվել հողային հաշվեկշիռը, 2010թվականի բյուջեի ընթացքի մասին համայնքի ղեկավարի II և III եռամսյակների հաղորդումները:

Ավագանու որոշմամբ հաստատվել է անասնագլխաքանակի հաշվառման աշխատանքները կազմակերպող հանձնաժողով, ինչը ավագանու իրավասությունը չէ:

Թիվ 2-Ա որոշմամբ սահմանվել է ՏԻՄ-երի կողմից քաղաքացիների ընդունելության կազմակերպման կարգը, գյուղապետարանում փակցված է համայնքի ավագանու և համայնքի ղեկավարի կողմից քաղաքացիների ընդունելության օրերը և ժամերը:

Համայնքի ավագանու նորմատիվ որոշումները՝ տեղական տուրքերի և վճարների տեսակներն ու դրույքաչափերը սահմանելու մասին և առևտրի, հասարակական սննդի և սպասարկման ոլորտի գործունեության համայնքային կանոնները հաստատելու մասին, օրենքով սահմանված կարգով ուղարկվել են ՀՀ արդարադատության նախարարություն իրավական փորձաքննության:

Հիմնականում համայնքի ավագանու որոշումների նախաբաններում չեն կատարվում նշումներ, թե ՀՀ օրենսդրության որ նորմատիվ իրավական ակտի համաձայն կամ ի կատարումն են ընդունվում այդ որոշումները:

Գյուղապետարանում չկա ցուցատախտակ, ստուգման ժամանակ ավագանու որոշումներ փակցված չէին: Առաջարկվել է տեղադրել ցուցատախտակ, համայնքի ավագանու որոշումները փակցնել ցուցատախտակին, տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը սահմանող որոշումը և որոշման հավելվածը փակցրած պահել տարվա ընթացքում, ինչպես նաև ավագանու նստավայրում (գյուղապետարանում) փակցնել համայնքի ղեկավարի անհատական որոշումները:

ՀՀ կառավարության 11.07.2002 թվականի թիվ 1146-Ն որոշմամբ սահմանված կարգով վարվում է ընդունած իրավական ակտերի հաշվառման մատյան:

ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԲՆԱԳԱՎԱՌ

Համայնքի զինապարտների գրանցամատյանի վարման աշխատանքները ընթացքի մեջ են: Մատյանում գրառումներ է կատարվել համայնքում հաշվառված զինապարտների վերաբերյալ ՀՀ ոստիկանության կողմից տրամադրված տվյալների հիման վրա, դեռևս չի վերցվել զինկոմիսարիատի կողմից տրամադրվող տվյալները:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԿԱԴՐԱՅԻՆ
ԳՈՐԾԵՐԻ ՎԱՐՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

1.ՀՀ տարածքային կառավարման համակարգող նախարարի 2006թ. նոյեմբերի 16-ի N 197-Ա հրամանի N 94 հավելվածով հաստատված Վահագնաձոր գյուղական համայնքի ղեկավարի աշխատակազմի համայնքային ծառայության պաշտոնների անվանացանկի համաձայն աշխատակազմի համայնքային ծառայության պաշտոնները երկուսն են:

2.Համայնքի ղեկավարի 2010թ. ապրիլի 22-ի թիվ 09 որոշմամբ հաստատվել է աշխատակազմի կանոնադրությունը:

3.Հանձնաժողովը արձանագրում է, որ 2006-2010 թվականներին համայնքի ղեկավարի կողմից բազմիցս խախտվել են համայնքային ծառայության ոլորտի գործող օրենսդրության պահանջները՝

-<<Համայնքային ծառայության մասին>> ՀՀ օրենքի 41-րդ և 42-րդ հոդվածների համաձայն համայնքների ղեկավարների աշխատակազմերի հաստիքացուցակի և համայնքային ծառայության պաշտոնների հաստատումից հետո՝ երկամսյա ժամկետում, համայնքային ծառայության պաշտոնների անվանացանկով նախատեսված պաշտոններում կարող են նշանակվել միայն անորոշ ժամկետով աշխատանքային պայմանագրերով աշխատողները: Համայնքի

ղեկավարը անտեսելով օրենքի պահանջը 07.12.2006թ.-ին իր թիվ 09 կարգադրությամբ Սիրանույշ Սարգսյանին 2 ամսով նշանակել է քարտուղարի պաշտոնում և նրան է վերապահել նաև ֆինանսիստի պարտականությունները: Հետագայում , համայնքի ղեկավարը իր 09.02.2007թ. թիվ 2 որոշմամբ հաստատել է համայնքային ծառայության պաշտոնների անձնագրերը և չի ընդունել ոչ մի իրավական ակտ Սիրանույշ Սարգսյանին աշխատանքից ազատելու , համայնքային ծառայող համարելու վերաբերյալ և Սիրանույշ Սարգսյանը շարունակել է զբաղեցնել քարտուղարի պաշտոնը մինչև 01.07.2008թ.:

-01.07.2008թ համայնքի ղեկավարը իր թիվ 01 կարգադրությամբ Սիրանույշ Սարգսյանին նշանակել է գյուղապետի օգնական: Առանց Սիրանույշ Սարգսյանին աշխատանքից ազատելու, համայնքի ղեկավարը իր 09.03.2009թ. թիվ 01 կարգադրությամբ Խասիկ Մացակյանին նշանակել է գյուղապետի օգնական 2 ամիս փորձաշրջանով :

Համայնքի ղեկավարը 04.05.2009թ. իր թիվ 04 կարգադրությամբ <<Համայնքի գյուղապետարանում (հիմնական) արձակուրդի փոխարեն աշխատանքի ընդունել Խասիկ Մացակյանին և վճարումը կատարել համապատասխան դրույքաչափով՝ 37000 դրամ >>, հետագայում, 27.07.2009թ. թիվ 05 և 01.09.2009թ. թիվ 06 կարգադրություններով Սիրանույշ Սարգսյանին և Խասիկ Մացակյանին տրամադրել է արձակուրդներ մինչև երեք տարեկան երեխայի խնամքի համար:

-Համայնքի ղեկավարը 20.04.2009թ. թիվ 03 որոշմամբ հաստատել է համայնքային ծառայության մրցութային և ատեստավորման հանձնաժողովների կազմերը և նույն որոշման 2-րդ կետով ուժը կորցրած է ճանաչել իր 09.02.2007թ.<<Համայնքային ծառայության պաշտոնների անձնագրերը հաստատելու մասին>> թիվ 02 որոշումը, որը բոլորովին կապ չունի 20.04.2009թ. թիվ 03 որոշման հետ, բացի այդ իր կողմից նույն օրը ընդունված թիվ 02 որոշմամբ արդեն իսկ ուժը կորցրած է ճանաչվել 09.02.2007թ.<<Համայնքային ծառայության պաշտոնների անձնագրերը հաստատելու մասին>> թիվ 02 որոշումը:

-Համայնքի ղեկավարը 2009թ.-ին առանց ամիսը և ամսաթիվը նշելու ընդունել է անհասկանալի և կամայական թիվ 05 որոշումը՝ աշխատակազմի քարտուղարի, առաջատար մասնագետի և 1-ին կարգի մասնագետի պաշտոնների համար մրցույթները 2009 թվականի օգոստոս ամսին անցկացնելու մասին: Այս առումով պետք է նշել ,որ Վահագնաձոր գյուղական համայնքի ղեկավարի աշխատակազմի համայնքային ծառայության պաշտոնների անվանացանկում արդեն իսկ չի եղել 1-ին կարգի մասնագետի պաշտոնը, բացի այդ աշխատակազմի առաջատար մասնագետ-հաշվապահի պաշտոնը այդ ժամանակ թափուր չի եղել:

-Համայնքի ղեկավարը 15.01.2010թ.-ին ընդունել է թիվ 02 որոշումը՝ քարտուղարի պաշտոնի համար մրցույթը 2010թ. հունվարի 29-ին անցկացնելու մասին: Այս որոշմամբ համայնքի ղեկավարը վկայակոչել է, որ ղեկավարվում է <<Համայնքային ծառայության մասին>> ՀՀ օրենքի 19-րդ և 46-րդ հոդվածների պահանջներով, այնինչ նշված հոդվածները որևէ կապ չունեն մրցույթ անցկացնելու հետ, բացի այդ նրա կողմից խախտվել է ՀՀ տարածքային կառավարման համակարգող նախարարի 2006թ. օգոստոսի 29-ի N 13-Ա հրամանի 11-րդ կետի պահանջը, ըստ որի , մրցույթը անցկացնելու մասին որոշումը ընդունվում է մրցույթն անցկացնելուց ոչ ուշ, քան մեկ ամիս առաջ:

4.Համայնքի ավագանու 26.12.2010թ. N26 որոշմամբ հաստատվել է համայնքի ղեկավարի աշխատակազմի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը: Ավագանու ընդունած որոշումը անհասկանալի է,

քանի որ չկա աշխատակիցների թվաքանակի, հաստիքացուցակի և պաշտոնային դրույքաչափերի մասին որևէ նշում կամ ըստ հավելվածի հաստատելու մասին հղումը: Այնինչ մարզպետարան ներկայացվել է որոշումը և հավելվածը:

5.Աշխատակազմի համայնքային ծառայողների անձնական գործերը ընդհանուր առմամբ վարվում են ՀՀ տարածքային կառավարման համակարգող նախարարի 07.11.2006թ. N 20-Ն հրամանով սահմանված համայնքային ծառայողների անձնական գործերը վարելու կարգին համապատասխան, սակայն անձնական գործերի ներքին վերգիրները չեն համապատասխանում կարգի 18-րդ կետի պահանջներին: Վերը նշվածի, ինչպես նաև անձնական գործերում առկա այլ թերությունները վերացնելու համար տրամադրվել է անհրաժեշտ խորհրդատվություն:

Հանձնաժողովի նախագահ՝

Ֆին. եւ սոց. տնտ. զարգացման վարչության պետի տեղակալ

---------- Լ. Բերոյան

Անդամներ՝

Իրավաբանական բաժնի պետ

---------- Ա. Սահակյան

ՏԻ եւ ՀԳՄ հարցերով վարչ. ՏԻ եւ համայնքային ծառ. հարց. բաժնի պետ

---------- Ժ. Ղազարյան

ՏԻ եւ ՀԳՄ հարցերով վարչ. ՀԳՄՏՍ գործ. համակարգման բաժնի պետ

---------- Վ. Հովհաննիսյան

Ֆին. եւ սոց. տնտ. զարգ. վարչության ֆին-տնտ. բաժնի գլխ. մասնագետ

---------- Ա. Բեջանյան

Վահագնաձոր համայնքի ղեկավար

---------- Է. Եղոյան

Վահագնաձոր համայնքի ղեկավարի աշխատակազմի քարտուղար

---------- Ի. Ավետյան

Վահագնաձոր համայնքի աշխ-կազմի առաջ. մասնագետ՝ հաշվապահ

---------- Ս. Խառատյան

Ակտ

03.05.2011թ. **գ. Դսեղ**

Լոռու մարզի համայնքներում 2011թ. ֆինանսական եւ վարչական հսկողություն իրականացնելու աշխատանքային ծրագրի համաձայն(ՀՀ տարածքային կառավարման նախարարի 2011թ. փետրվարի 14-ի թիվ 20 հրաման, ՀՀ Լոռու մարզպետի 2011թ. փետրվարի 23-ի թիվ 68 կարգադրություն), մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական եւ սոցիալ-տնտեսական զարգացման վարչության պետի տեղակալ Լ. Բերոյանս, ՏԻ եւ ՀԳՄ հարցերով վարչության ՏԻ եւ համայնքային ծառայության հարցերի բաժնի պետ Ժ. Ղազարյանս, ՏԻ եւ ՀԳՄ հարցերով վարչության հանրապետական գործադիր մարմինների տարածքային ստորաբաժանումների գործունեության համակարգման բաժնի պետ Վ. Հովհաննիսյանս, ֆինանսական եւ սոցիալ-տնտեսական զարգացման վարչության ֆինանսատնտեսագիտական բաժնի գլխավոր մասնագետ Ա. Բեջանյանս Դսեղի գյուղապետարանում կատարեցինք ֆինանսական եւ վարչական ստուգում: Ստուգումը ընդգրկում է 2010թ. հունվարի 1-ից 2011թ. ապրիլի 1-ը ընկած ժամանակաշրջանը: Ստուգման աշխատանքներին մասնակցում էին Դսեղ համայնքի ղեկավար Գ. Հովսեփյանը, աշխատակազմի քարտուղար՝ Վ. Հովսեփյանը, հաշվապահ՝ Բ. Սարգսյանը:

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ

ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ

2010թ. բյուջեով նախատեսված 36234.7 հազ. դրամ եկամուտների դիմաց փաստացի մուտքերը կազմել են 34257.5 հազ. դրամ, կամ կատարվել են 94.5%-ով: Սեփական եկամուտները նախատեսված 15794.7 հազ. դրամի դիմաց կազմել է 13817.5 հազ. դրամ, կամ հավաքագրումը կազմել է 87.5%:

Սեփական եկամուտների գծով թերակատարվել են հողի հարկի, գույքահարկի, այլ գույքի վարձակալության և վարչական գանձումների հավաքագրման ցուցանիշները:

2011թ. ապրիլի 1-ի դրությամբ համայնքի բյուջեի եկամուտների կատարման ցուցանիշները նվազել են և կազմել են 68.5%, այդ թվում սեփական եկամուտները հավաքագրվել են 49.5 %-ով: Թերակատարվել են հողի հարկի, գույքահարկի, տեղական տուրքերի և վարչական գանձումների հավաքագրման ցուցանիշները:

(հազ. դրամ)

Բյուջեի եկամուտներ	**2010թվական**			**Առ 01.04.2011թ.**		
	Նախա-տեսված է	Փաստա-ցի	%	Նախա-տեսված է	Փաստա-ցի	%
1	2	3	4	5	6	7
ՎԱՐՉԱԿԱՆ ԲՅՈՒՋԵ	**36234,7**	**34257,5**	**94,5**	**13005.0**	**8912,5**	**68.5**
Հողի հարկ	11452,2	9493,2	82,9	6439,4	2844,1	44.8
Գույքահարկ	1902,2	1495,6	78,6	625,0	258,8	41.4
Տեղական տուրք	420,0	712,8	169,7	225,0	102,4	45.5
Պահուստային հողերի վարձավճարներ	950,3	996,1	104,8	250,0	290,4	116.2
Այլ գույքի վարձակալությունից մուտքեր	120,0	88,0	73,3		39,0	-
Վարչական գանձումներ	900,0	881,8	98,0	250,0	124,1	49.6
Այլ մուտքեր	50,0	150,0	300,0	10,0	200,0	200.0
Ընդամենը սեփական եկամուտներ	**15794,7**	**13817,5**	**87,5**	**7799.4**	**3858,8**	**49.5**

1	2	3	4	5	6	7
Պետական բյուջից տրվող դոտացիա	19840,0	19840,0	100,0	5055,6	5053,7	99.9
Անասնաբուժական ծառայություն	600,0	600,0	100,0	150,0	-	-
ՖՈՆԴԱՅԻՆ ԲՅՈՒՋԵ	-	-	-	-	-	-
ԸՆԴԱՄԵՆԸ	**36234,7**	**34257,5**	**94,5**	**13005,0**	**8912,5**	**68.5**

Համայնքի տարածքում գործում է 12 առևտրի կետ, որոնք զբաղվում են ծխախոտի և ալկահոլային խմիչքների վաճառքով: Ալկահոլային խմիչքների վաճառքի թույլտվության համար սահմանվել է տեղական տուրք եռամյակը 3000 դրամ, ծխախոտի վաճառքի թույլտվության համար՝ 3000 դրամ:

2011թ. առաջին եռամյակում թերակատարվել են տեղական տուրքերի գանձման ցուցանիշը, կամ մի շարք կազմակերպությունները չունենալով համապատասխան թույլտվություն վարում են անօրինական գործունեություն: Ստուգման ժամանակ հանդիպել ենք տեղական տուրք չմուծած անձանց, տարվել է համապատասխան բացատրական աշխատանքներ, ինչի արդյունքում գանձվել է 51,0 հազ. դրամ տեղական տուրք:

Առևտրի եւ ծառայությունների ոլորտում համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 40-րդ հոդվածի եւ «Առևտրի ու ծառայությունների մասին» ՀՀ օրենքի 17.1 հոդվածի չեն իրականացվել համապատասխան հսկողություն: Ընդունված կարգի համաձայն համայնքի ղեկավարը իրավասու է առևտրի օբյեկտներում կատարել ստուգումներ և անօրինական գործունեության համար նշանակել համապատասխան տուգանքներ: Մասնավորապես <Վարչական իրավախախտումների մասին> ՀՀ օրենքի 169 հոդվածի համաձայն առևտրի, հանրային սննդի և կենցաղային ծառայությունների ոլորտում առանց համապատասխան թույլտվության գործունեության իրականացումը առաջացնում է տուգանք ոգելից խմիչքների և ծխախոտի վաճառքի համար՝ 20000-50000 դրամ:

Թույլտվությունների տրման ժամանակ խախտվել է ՀՀ կառավարության 2007թ. հուլիսի 19-ի թիվ 843-Ն որոշման պահանջը՝ չեն ներկայացվել թույլտվության հայտեր, չեն լրացվել սահմանված թույլտվության ձեւեր:

Նախորդ տարիներին համայնքի բյուջեի պարբերաբար թերակատարման հետեւանքով կուտակվել են խոշոր չափերի հասնող ապառքներ, որոնք 01.01.2011թ. դրությամբ կազմում են հողի հարկից՝ 53055.5 հազ. դրամ, գույքահարկից՝ 13852.8 հազ. դրամ (շինություններից՝ 3463.6 հազ. դրամ, փոխադրամիջոցներից՝ 10389.2 հազ. դրամ): 2010թ. հողի հարկի տարեկան հաշվարկը կազմել է՝ 7890.9 հազ. դրամ, գույքահարկինը՝ 1924.7 հազ. դրամ:

Հարկերի և վարձավճարների գծով խոշոր չափի պարտքեր ունեն նաև <<Դսեղի միջնակարգ դպրոց>> ՊՈԱԿ-ի, <<Դսեղի առողջության կենտրոն>> ՊՓԲԸ-ի և <<Հայանտառ>> ՊՈԱԿ-ի <<Դսեղի անտառտնտեսություն>> մասնաճյուղի աշխատակիցները: Դպրոցի 42 աշխատակիցների պարտքի գումարները կազմում են 2909,2 հազ. դրամ, առողջության կենտրոնի 18 աշխատակիցների պարտքերը՝ 1092,5 հազ. դրամ, անտառտնտեսության 13 աշխատակիցների պարտքերը՝ 1531,8 հազ. դրամ: Համայնքի ղեկավարին առաջարկվել է նշված կազմակերպությունների տնօրինության և աշխատակիցների, ինչպես նաև պարտքեր ունեցող մյուս հարկատուների հետ տանել բացատրական աշխատանքներ կուտակված ապառքները մարելու համար, կազմել պարտքերի մարման ժամանակացույցեր, կամ գումարները գանձել դատական կարգով:

2011թ. բյուջեում գույքահարկի ապառքներից գումարներ չեն նախատեսվել, իսկ հողի հարկի 53055.5 հազ. դրամ ապառքից նախատեսվել է ընդամենը 8792.4 հազ. դրամ:

2011թ. բյուջեով մուտքեր չեն նախատեսվել այլ գույքի վարձակալությունից, սակայն առաջին եռամսյակում գանձվել է 39.0 հազ. դրամ(շենքի ներսում տրված է վարձակալությամբ տարածք, պայմանագիրը լրացված է թերություններով և բացթողումներով, չունի պետական և նոտարական գրանցում):

Համայնքի բյուջեում պահուստային հողերի վարձակալության վարձավճարներից նախատեսված են մուտքեր 950,3 հազ. դրամ, այդ վարելահողերից՝ 918,5 հազ. դրամ, խոտհարքներից՝ 31,8 հազ. դրամ: Արոտները վարձակալությամբ չեն տրամադրել և բյուջեում գումարներ չեն նախատեսվել:

Օտարումներից մուտքերը կազմել են 275,7 հազ. դրամ, որից հողի օտարում՝ 40,0 հազ. դրամ, այլ հիմնական միջոցներից մուտքեր՝ 235,7 հազ. դրամ:

ԲՅՈՒՋԵԻ ԾԱԽՍԵՐ

Դրամարկղային ծախսերը 2010թ. նախատեսված 37237,0 հազ. դրամի դիմաց կազմել են 34535,2 հազ. դրամ, որից վարչական բյուջեի ծախս՝ 33835,2 հազ. դրամ, ֆոնդային բյուջե՝ 700,0 հազ. դրամ: 2011թ. առաջին եռամսյակում դրամարկղային ծախսերը կազմել են 8046,7 հազ. դրամ:

Դրամարկղային ծախսերը 2010թ.-ին և 2011թ. առաջին եռամսյակում

(հազ. դրամ)

Բյուջետային ծախսեր ըստ տնտեսագիտական դասակարգման	2010թ.-ին	2011թ. ապրիլի 1-ի դրությամբ
1	2	3
Ա. Ընթացիկ ծախսեր	***33835,2***	***8046,7***
Աշխատավարձեր և հավելավճարներ	12404,5	3156,5
Պարգևատրումներ և դրամական խրախուսումներ	691,0	-
Սոցիալական ապահովության վճարներ	2691,8	643,7
Գործառնական և բանկային ծառայություններ	40,0	-
Էներգետիկ ծառայություն	379,1	159,8
Կապի ծառայություն	514,6	77,8
Ապահովագրական ծախսեր	26,0	-
Ներքին գործուղումներ	285,0	41,4
Համակարգչային ծառայություններ	35,0	35,0
Աշխատակազմի մասնագիտական զարգացման ծախսեր	100,0	-
Տեղեկատվական ծառայություններ	56,8	16,0
Կառավարչական ծառայություններ	40,0	-
Ներկայացուցչական ծախսեր	300,0	-
Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ	212,0	51,0
Մասնագիտական ծառայություններ	174,0	129,9
Ընթացիկ նորոգում և պահպանում	1879,5	30,0
Գրասենյակային նյութեր	260,0	50,0
Տրանսպորտային նյութեր	870,0	100,0
Կենցաղային և հանրային սննդի նյութեր	982,0	170,0
Հատուկ նպատակային այլ նյութեր	378,0	100,0
Դրամաշնորհներ	960,0	-
Սոցիալական օգնություններ	10441,5	3269,6

1	2	3
Այլ ծախսեր	114,4	16,0
Բ. Ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսեր	***1000,0***	-
Շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում	600,0	-
Վարչական սարքավորումներ	400,0	-
ԸՆԴԱՄԵՆԸ	***34535,2***	***8046,7***

Աշխատողներին վճարված գումարների (աշխատավարձեր, գործուղման ծախսեր, արձակուրդային վճարներ, դրամական պարգևատրություններ) ընտրանքային ստուգմամբ տարբերություններ չեն հայտնաբերվել: Առանձին դեպքերում գործուղումներ մեկնելու ժամանակ համայնքի ղեկավարի կարգադրություններում չի նշված գործուղում մեկնելու նպատակները:

Ծախսերի մեջ մեծ տեսակարար կշիռ է կազմում սոցիալական օգնությունները, որոնք կազմել են 2010թ.-ին՝ 10441,5 հազ. դրամ(ընդհանուր ծախսերի 30.2%), 2011թ. ապրիլի 1-ի դրությամբ՝ 3269,6հազ. դրամ(40.6%): Տրվել է սոցիալական օգնություններ անապահով կամ ֆինանսական ծանր վիճակում գտնվող ընտանիքներին, նորածինների ընտանիքներին և ուսանողների ուսման վճարներ:

Համայնքի ղեկավարին առաջարկվել է համայնքի բյուջեի միջոցները ուղղել համայնքային կարիքները հոգալու համար, իսկ սոցիալական օգնություններ տրամադրել սոցիալապես առավել ծանր վիճակում գտնվող քաղաքացիներին:

Աշխատանքի հաճախումների տաբելները լրացվում են թերություններով: Խախտվել է ՀՀ աշխատանքային օրենսգրքի 147-րդ հոդվածի 1-ին կետի պահանջը, համաձայն որի «ոչ աշխատանքային՝ տոնական եւ հիշատակի օրերի նախօրյակին աշխատանքային օրվա տեւողությունը կրճատվում է մեկ ժամով»:

Գնված ապրանքանյութական արժեքների ծախսերը հաստատող փաստաթղթերի ուսումնասիրությամբ պարզվեց, որ Հաղթանակի օրվա կապակցությամբ գնվել է 140,0 հազ. դրամի 14 հատ հուշանվերներ, որոնք համաձայն կազմած ակտի տրվել են պատերազմի վետերաններին և նրանց այրիներին: Ընդհանրապես նվերներ կամ հուշանվերներ հանձնելու ժամանակ ծախսերը հիմնավորելու համար անհրաժեշտ է ակտերին կցել նաև նվերներ կամ հուշանվերներ ստացողների ցուցակները (բաշխման ցուցակները):

Ֆինանսական հաշվետվությունները կազմվել են սահմանված կարգով և ներկայացվել են ժամանակին:

ՎԱՐՉԱԿԱՆ ՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ

ԱՎԱԳԱՆՈՒ ԻՐԱՎԱՍՈՒԹՅՈՒՆ

2010 թվականի ընթացքում Դսեղ համայնքի ավագանին կայացրել է 14 նիստ, ընդունել է 55 որոշում:

2010թվականի ընթացքում Դսեղ համայնքի ավագանին իր իրավասությունների սահմաններում.

-հաստատել է 2011 թվականի համայնքի բյուջեն.

-հաստատել է 2010թվականի բյուջեի՝ համայնքի ղեկավարի առաջարկած փոփոխությունները.

-հաստատել է 2009թվականի բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունը.

-ի գիտություն է ընդունել 2010 թվականի բյուջեի ընթացքի մասին համայնքի ղեկավարի I եռամսյակի հաղորդումը.

-հաստատել է առևտրի, հասարակական սննդի և սպասարկման ոլորտի գործունեության համայնքային կանոնները (որոշումը իրավական փորձաքննության չի ներկայացվել).

-սահմանել է համայնքի կողմից մատուցվող ծառայությունների դիմաց գանձվող վճարների դրույքաչափերը.

-2011 թվականի համար սահմանել է տեղական տուրքերի և վճարների տեսակներն ու դրույքաչափերը (որոշումը ներկայացվել է իրավական փորձաքննության).

-համայնքի ղեկավարի առաջարկությամբ որոշում է կայացրել համայնքի սեփականություն համարվող գույքն օգտագործման տրամադրելու և օտարելու մասին, հաստատել է դրանց մեկնարկային գները.

-հաստատել է համայնքային սեփականության գույքագրման փաստաթղթերը.

-հաստատել է հողային հաշվեկշիռը.

-որոշում է կայացրել համայնքային բյուջետային հիմնարկը համայնքային ոչ առևտրային կազմակերպության վերակազմակերպման մասին:

Համայնքի ղեկավարի աշխատակազմի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը առանձին որոշումով չեն հաստատվել, հաստատվել են որպես համայնքի 2011թ. բյուջեի հաստատման մասին որոշման հավելված:

Ավագանուն չի ներկայացվել 2010թվականի բյուջեի ընթացքի մասին համայնքի ղեկավարի II և III եռամսյակների հաղորդումները:

Թիվ 7-Ա որոշմամբ սահմանվել է ՏԻՄ-երի կողմից քաղաքացիների ընդունելության կազմակերպման կարգը, գյուղապետարանում փակցված է համայնքի ավագանու և համայնքի ղեկավարի կողմից քաղաքացիների ընդունելության օրերը և ժամերը:

2011 թվականի ընթացքում Դսեղ համայնքի ավագանին կայացրել է 5 նիստ, ընդունել է 15 որոշում:

2011 թվականի ընթացքում Դսեղ համայնքի ավագանին իր իրավասությունների սահմաններում.

-հաստատել է 2010թվականի բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունը.

-հաստատել է 2011թվականի բյուջեի՝ համայնքի ղեկավարի առաջարկած փոփոխությունները.

-ի գիտություն է ընդունել 2011 թվականի բյուջեի ընթացքի մասին համայնքի ղեկավարի I եռամսյակի հաղորդումը.

-հաստատել է համայնքի խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովի կազմը.

-ավագանու աշխատակարգում կատարել է փոփոխություններ:

Գյուղապետարանում առկա է ցուցատախտակ, ստուգման ժամանակ ավագանու որոշումները փակցված էին ցուցատախտակին: Առաջարկվել է

ավագանու նստավայրում (գյուղապետարանում) փակցնել համայնքի ղեկավարի անհատական որոշումները:

ՀՀ կառավարության 11.07.2002 թվականի թիվ 1146-Ն որոշմամբ սահմանված կարգով վարվում է ընդունած իրավական ակտերի հաշվառման մատյաններ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԿԱԴՐԱՅԻՆ
ԳՈՐԾԵՐԻ ՎԱՐՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Իրականացված վարչական վերահսկողության արդյունքում պարզվել է՝

1.ՀՀ տարածքային կառավարման համակարգող նախարարի 2006թ. նոյեմբերի 16-ի N 197-Ա հրամանի N 27 հավելվածով հաստատված Դսեղ գյուղական համայնքի ղեկավարի աշխատակազմի համայնքային ծառայության պաշտոնների անվանացանկի համաձայն աշխատակազմի համայնքային ծառայության պաշտոնները 7-ն են:

2. Համայնքի ղեկավարի 2010թ. դեկտեմբերի 22-ի թիվ 31 որոշմամբ հաստատվել է աշխատակազմի կանոնադրությունը :

3. Համայնքի ավագանու 20.12.2010թ. N 53 որոշմամբ հաստատվել է համայնքի ղեկավարի աշխատակազմի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը: Հաստատված հաստիքացուցակը համայնքային ծառայության պաշտոնների մասով համապատասխանում է ՀՀ տարածքային կառավարման համակարգող նախարարի կողմից հաստատված պաշտոնների անվանացանկին:

4. Աշխատակազմի համայնքային ծառայողների անձնական գործերը ընդհանուր առմամբ վարվում են ՀՀ տարածքային կառավարման նախարարի 07.11.2006թ. N 20-Ն հրամանով հաստատված համայնքային ծառայողների անձնական գործերը վարելու կարգին համապատասխան, սակայն անձնական գործերի ներքին վերգիրների գրառումները թերի են կատարվել և չեն համապատասխանում կարգի 18-րդ կետի պահանջներին: Վերը նշվածի, ինչպես նաև անձնական գործերում առկա այլ թերությունները վերացնելու համար տրամադրվել է անհրաժեշտ խորհրդատվություն:

5. <<Համայնքային ծառայության մասին>> ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն համայնքային ծառայողների միջև ծառայողական փոխհարաբերությունները կարգավորվում են նաև աշխատանքային կարգապահական ներքին կանոնակարգով, որը հաստատում են համապատասխան համայնքների ղեկավարները՝ ՀՀ կառավարության լիազորած պետական կառավարման մարմնի հաստատած օրինակելի կանոնակարգի հիման վրա:

Համայնքի ղեկավարի 2011 թվականի հունվարի 26-ի N 01-Ն որոշմամբ հաստատվել է աշխատակազմի նոր աշխատանքային կարգապահական ներքին կանոնակարգը, որին չեն իրազեկվել աշխատակազմի աշխատակիցները:

Այս առումով՝ անհրաժեշտ է ձեռնարկել միջոցներ աշխատակազմի կարգապահական ներքին կանոնակարգը աշխատակազմի բոլոր աշխատակիցներին պատշաճ իրազեկում ապահովելու ուղղությամբ:

6.Համայնքի ղեկավարի աշխատակազմի առաջին կարգի մասնագետ Մարգարիտ Չատինյանը 2009թ. նոյեմբերի 2-ից գտնվել է հղիության համար, իսկ 2011թ. հունվարի 27-ից մինչև երկու տարեկան երեխայի խնամքի համար արձակուրդում:

<< Համայնքային ծառայության մասին >> ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի համաձայն այդ պաշտոնը համարվում է ժամանակավոր թափուր և այն պետք է զբաղեցվի

համայնքային ծառայության կադրերի ռեզերվում գտնվող՝ տվյալ պաշտոնի անձնագրի պահանջները բավարարող անձի հետ ժամկետային աշխատանքային պայմանագիր կնքելով, կամ << Համայնքային ծառայության մասին >> ՀՀ օրենքի պահանջները բավարարող այլ անձի հետ ժամկետային աշխատանքային պայմանագիր կնքելով:

Համաձայն ՀՀ կառավարության 13.07.2006թ. N 1002-Ն որոշմամբ հաստատված կարգի՝ համայնքի ղեկավարը 3-օրյա ժամկետում կադրերի ռեզերվում գրանցված անձի մասին տեղեկություններ ստանալու և նրա հետ պայմանագիր կնքելու համար գրավոր պետք է դիմեր ՀՀ տարածքային կառավարման նախարարություն, սակայն խախտելով ՀՀ կառավարության որոշմամբ հաստատված կարգը համայնքի ղեկավարը մինչ այժմ չի դիմել նախարարություն և որևէ անձի հետ չի կնքել ժամկետային աշխատանքային պայմանագիր:

7. ՀՀ տարածքային կառավարման նախարարության կողմից 2009 թվականին համայնքի ղեկավարի աշխատակազմի կադրային գործի վարման նկատմամբ իրականացված վերահսկողության ընթացքում հայտնաբերված թերությունների վերացման ուղղությամբ տարվել են զգալի աշխատանքներ, ինչի արդյունքում հայտնաբերված թերությունները ընդհանուր առմամբ վերացվել են:

Հանձնաժողովի նախագահ՝

Ֆին. եւ սոց. տնտ. զարգացման
վարչության պետի տեղակալ

---------- Լ. Բերոյան

Դսեղ համայնքի ղեկավար

---------- Գ. Հովսեփյան

Անդամներ՝

ՏԻ եւ ՀԳՄ հարցերով վարչ. ՏԻ եւ
համայնքային ծառ. հարց. բաժնի պետ

---------- Ժ. Ղազարյան

Դսեղ համայնքի ղեկավարի
աշխատակազմի քարտուղար

---------- Վ. Հովսեփյան

ՏԻ եւ ՀԳՄ հարցերով վարչ. ՀԳՄՏՍ
գործ. համակարգման բաժնի պետ

---------- Վ. Հովհաննիսյան

Դսեղ համայնքի աշխ-կազմի
առաջ. մասնագետ՝ հաշվապահ

---------- Բ. Սարգսյան

Ֆին. եւ սոց. տնտ. զարգ. վարչության
ֆին-տնտ. բաժնի գլխ. մասնագետ

---------- Ա. Բեջանյան

Ակտ

14.06.2011թ. **գ. Շիրակամուտ**

Լոռու մարզի համայնքներում 2011թ. ֆինանսական եւ վարչական հսկողություն իրականացնելու աշխատանքային ծրագրի համաձայն(ՀՀ տարածքային կառավարման նախարարի 2011թ. փետրվարի 14-ի թիվ 20 հրաման, ՀՀ Լոռու մարզպետի 2011թ. փետրվարի 23-ի թիվ 68 կարգադրություն), մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական եւ սոցիալ-տնտեսական զարգացման վարչության պետի տեղակալ Լ. Բերոյանս, ՏԻ եւ ՀԳՄ հարցերով վարչության ՏԻ եւ համայնքային ծառայության հարցերի բաժնի պետ Ժ. Ղազարյանս, ՏԻ եւ ՀԳՄ հարցերով վարչության հանրապետական գործադիր մարմինների տարածքային ստորաբաժանումների գործունեության համակարգման բաժնի պետ Վ. Հովհաննիսյանս, ֆինանսական եւ սոցիալ-տնտեսական զարգացման վարչության ֆինանսատնտեսագիտական բաժնի գլխավոր մասնագետ Ա. Բեջանյանս Շիրակամուտի գյուղապետարանում կատարեցինք ֆինանսական եւ վարչական ստուգում: Ստուգումը ընդգրկում է 2010թ. հունվարի 1-ից 2011թ. ապրիլի 1-ը ընկած ժամանակաշրջանը: Ստուգման աշխատանքներին մասնակցում էին Շիրակամուտ համայնքի ղեկավար Ս. Մազմանյանը, աշխատակազմի քարտուղար՝ Հ. Երանոսյանը, հաշվապահ՝ Ա. Մազմանյանը:

Գյուղապետարանի գործունեությունը կանոնակարգվում է ՀՀ Սահմանադրությամբ, ՀՀ Աշխատանքային օրենսգրքով, գյուղապետարանի կանոնադրությամբ, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքով եւ այլ իրավական ակտերով:

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ

ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ

2010թ. բյուջեով նախատեսված 40726.3 հազ. դրամ եկամուտների դիմաց փաստացի մուտքերը կազմել են 40341.3 հազ. դրամ, կամ կատարվել են 99.1%-ով: Սեփական եկամուտները նախատեսված 10830.9 հազ. դրամի դիմաց կազմել է 10445.4 հազ. դրամ, կամ հավաքագրումը կազմել է 96.4%:

Սեփական եկամուտներիից թերակատարվել են հողի հարկի գանձումները՝ 1239.3 հազ. դրամով, գույքահարկը՝ 96.9 հազ. դրամով և տեղական տուրքերը՝ 204.9 հազ. դրամով:

2011թ. ապրիլի 1-ի դրությամբ համայնքի բյուջեի եկամուտների կատարման ցուցանիշները նվազել և կազմել են 97.1%, այդ թվում սեփական եկամուտները հավաքագրվել են 91.7%-ով: Թերակատարվել են հողի հարկի, տեղական տուրքերի և այլ մուտքերի հավաքագրման ցուցանիշները:

(հազ. դրամ)

Բյուջեի եկամուտներ	**2010թվական**			**Առ 01.04.2011թ.**		
	Նախա-տեսված է	Փաստա ցի	%	Նախա-տեսված է	Փաստա ցի	%
1	2	3	4	5	6	7
ՎԱՐՉԱԿԱՆ ԲՅՈՒՋԵ	**40726.8**	**40341.3**	**99.1**	**9899.3**	**9614.3**	**97.1**
Հողի հարկ	6639.4	5400.1	81.3	1245.6	788.9	63.3
Գույքահարկ	1450.0	1353.1	93.3	297.0	332.1	111.8
Տեղական տուրք	630.0	425.1	67.5	125.0	88.1	70.5

Պահուստային հողերի վարձավճարներ	1151.5	1635.5	142.0	250.0	632.7	253.0
Այլ մուտքեր	960.0	1631.6	170.0	350.0	237.8	67.9
Ընդամենը սեփական եկամուտներ	**10830.9**	**10445.4**	**96.4**	**2267.6**	**2079.6**	**91.7**
Պետական բյուջից տրվող դոտացիա	29295.9	29295.9	100.0	7481.7	7481.7	100.0
Պետական բյուջեից տրվող սուբվենցիա	-	-	-	-	53.0	-
Անասնաբուժական ծառայություն	600.0	600.0	100.0	150.0	-	-
ՖՈՆԴԱՅԻՆ ԲՅՈՒՋԵ	-	-		**308.3**	-	-
Վարչական բյուջեից կատարվող հատկացումներ	-	-		308.3	-	-
ԸՆԴԱՄԵՆԸ	**40726.8**	**40341.3**	**99.1**	**9899.3**	**9614.3**	**97.1**

2011թ. առաջին եռամսյակում պետական բյուջեից անասնաբուժական ծառայության համար նախատեսված 150.0 հազ. դրամի դիմաց փաստացի մուտքեր չեն կատարվել:

Նախորդ տարիներին համայնքի բյուջեի պարբերաբար թերակատարման հետևանքով հողի հարկի ապառքները 01.01.2011թ. դրությամբ կազմել են 11773.0 հազ. դրամ, որից 2011թ. բյուջեում մտցվել է 2442.5 դրամը:

Համայնքի տարածքում գործում է 7 մթերային խանութ և 1 հեղուկ վառելիքի վաճառքի կետ: Ալկահոլային խմիչքների վաճառքի թույլտվության համար սահմանվել է տեղական տուրք եռամսյակը 2400 դրամ, ծխախոտի վաճառքի թույլտվության համար՝ եռամսյակը 2400 դրամ, հեղուկ վառելիքի և հեղուկացված գազի վաճառքի թույլտվության համար՝ 150000 դրամ: Ստուգման պահին 2011թ. համար նախատեսված տեղական տուրքը չէր մուծել հեղուկ վառելիքի վաճառքով զբաղվող ա/ձ Հ. Պապոյանը: Համայնքի ղեկավարին առաջարկվել է տեղական տուրքի գանձումը (150.0 հազ. դրամ) ապահովելու նպատակով ձեռնարկել համապատասխան միջոցները:

Առևտրի եւ ծառայությունների ոլորտում համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 40-րդ հոդվածի եւ «Առևտրի ու ծառայությունների մասին» ՀՀ օրենքի 17.1 հոդվածի չեն իրականացվել համապատասխան հսկողություն: Ընդունված կարգի համաձայն համայնքի ղեկավարը իրավասու է առևտրի օբյեկտներում կատարել ստուգումներ և անօրինական գործունեության համար նշանակել համապատասխան տուգանքներ:

Վաճառքի թույլտվությունների տրման ժամանակ խախտվել է ՀՀ կառավարության 2007թ. հուլիսի 19-ի թիվ 843-Ն որոշման պահանջը՝ չեն ներկայացվել թույլտվության հայտեր, չեն լրացվել սահմանված թույլտվության ձևեր:

Հողի օտարումից մուտքերը կազմել եմ 921.2 հազ. դրամ, որոնք կատարվել են ուղղակի վաճառքով կամ աճուրդով: Առկա էր աճուրդային հանձնաժողովի արձանագրությունների գիրք, որը վարվում է թերություններով և բացթողումներով:

ԲՅՈՒՋԵԻ ԾԱԽՍԵՐ

Դրամարկղային ծախսերը 2010թ. կազմել են 40913.3հազ. դրամ, իսկ 2011թ. առաջին եռամսյակում՝ 8344.3 հազ. դրամ:

Դրամարկղային ծախսերը 2010թ.-ին և 2011թ. առաջին եռամսյակում

(հազ. դրամ)

Բյուջետային ծախսեր ըստ տնտեսագիտական դասակարգման	2010թ.	Առ.01.04.2011թ.
1	2	3
Ա. Ընթացիկ ծախսեր	*38397.5*	*8201.3*

Աշխատավարձեր և հավելավճարներ	20790.1	5120.6
Պարգևատրումներ և դրամական խրախուսումներ	1595.0	-
Սոցիալական ապահովության վճարներ	4920.2	1163.1
Էներգետիկ ծառայություն	693.3	260.0
Կոմունալ ծառայություններ	200.0	50.0
Կապի ծառայություն	122.1	50.0
Ապահովագրական ծախսեր	33.0	-
Ներքին գործուղումներ	450.0	90.0
Համակարգչային ծառայություններ	74.6	61.6
Տեղեկատվական ծառայություններ	46.5	34.8
Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ	158.0	-
Մասնագիտական ծառայություններ	658.9	-
Ընթացիկ նորոգում և պահպանում	64.5	25.0
Գրասենյակային նյութեր	790.0	130.0
Տրանսպորտային նյութեր	2225.0	400.0
Կենցաղային և հանրային սննդի նյութեր	471.0	36.2
Հատուկ նպատակային այլ նյութեր	2362.4	330.0
Այլ կապիտալ դրամաշնորհներ	778.2	-
Սոցիալական օգնություններ	1854.7	450.0
Այլ ծախսեր	110.0	-
Բ. Ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսեր	***2515.8***	***143.0***
Շենքերի և շինությունների կառուցում	1180.0	-
Շենքերի և շինությունների կապիտալ վերակառուցում	575.9	-
Վարչական սարքավորումներ	759.9	143.0
ԸՆԴԱՄԵՆԸ	***40913.3***	***8344.3***

Աշխատանքի հաճախումների տաբելները լրացվում են թերություններով:

Ռ. Պապիկյանին համաձայն հրամանի դեկտեմբեր ամսին տրամադրվել է 24 աշխատանքային օր արձակուրդ, որի համապատասխան կատարվել է արձակուրդային վճարի հաշվարկ: Սակայն արձակուրդային օրերի ոչ ճիշտ հաշվարկի պատճառով նա աշխատանքի է ներկայացել 2 օր շուտ, ինչի արդյունքում հունվար ամսին նրան ավել հաշվարկվել է 11333 դրամ աշխատավարձ/նույն օրերի համար հաշվարկվել է արձակուրդային վճար և աշխատավարձ/:

Աշխատողներին արձակուրդ տրամադրելու հրամանները կամ կարգադրությունները տրվում են ուշացումներով(սեպտեմբերի 1-ին տրվել է կարգադրություն սեպտեմբերի 1-ից արձակուրդ տրամադրելու վերաբերյալ), արձակուրդային վճարները վճարվում են ուշացումներով, կամ խախտվել է ՀՀ աշխատանքային օրենսգրքի 169-րդ հոդվածի 2-րդ կետի պահանջը, համաձայն որի ամենամյա արձակուրդային վճարը աշխատողին պետք է վճարել արձակուրդ մեկնելուց առնվազը երեք օր առաջ: Եթե աշխատողին արձակուրդային վճարը վճարվում է ուշացումով, ապա արձակուրդը տեղափոխվում է այնքան օրով, որքան օրով ուշացվել է վճարումը, և երկարաձգված ժամանակի համար վճարումը կատարվում է այնպես, ինչպես ամենամյա արձակուրդի համար:

Կատարված ավտոպահեստամասերի ծախսերը հիմնավորելու համար չեն կազմվել համապատասխան թերությունների և տեղադրման ակտեր:

ՎԱՐՉԱԿԱՆ ՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ

ԱՎԱԳԱՆՈՒ ԻՐԱՎԱՍՈՒԹՅՈՒՆ

2010 թվականի ընթացքում Շիրակամուտ համայնքի ավագանին կայացրել է 19 նիստ, ընդունել է 32 որոշում:

2010 թվականի ընթացքում Շիրակամուտ համայնքի ավագանին իր իրավասությունների սահմաններում.

Հաստատել է 2011 թվականի համայնքի բյուջեն.

հաստատել է 2010 թվականի բյուջեի՝ համայնքի ղեկավարի առաջարկած փոփոխությունները.

հաստատել է 2009 թվականի բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունը.

հաստատել է առևտրի, հասարակական սննդի և սպասարկման ոլորտի գործունեության համայնքային կանոնները (որոշումը ներկայացվել է իրավական փորձաքննության).

2010 և 2011 թվականների համար սահմանել է տեղական տուրքերի և վճարների տեսակներն ու դրույքաչափերը (որոշումները ներկայացվել են իրավական փորձաքննության).

սահմանել է համայնքի կողմից մատուցվող ծառայությունների դիմաց գանձվող վճարների դրույքաչափերը.

համայնքի ղեկավարի առաջարկությամբ որոշում է կայացրել համայնքի սեփականություն համարվող գույքն օգտագործման օտարելու մասին, հաստատել է դրանց օտարման գների չափերը և պայմանները, հրապարակային սակարկության դեպքում՝ մեկնարկային գները.

հաստատել է համայնքի ղեկավարի աշխատակազմի և բյուջետային հիմնարկների աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը.

հաստատել է համայնքային սեփականության գույքագրման փաստաթղթերը.

հաստատել է հողային հաշվեկշիռը.

հաստատել է համայնքի խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովի կազմը.

Համայնքի ավագանուն չի ներկայացվել 2010 թվականի բյուջեի ընթացքի մասին համայնքի ղեկավարի եռամսյակային հաղորդումները:

17.02.2010թ. թիվ 5-Ա որոշմամբ սահմանվել է ՏԻՄ-երի կողմից քաղաքացիների ընդունելության կազմակերպման կարգը, գյուղապետարանում փակցված է համայնքի ավագանու և համայնքի ղեկավարի կողմից քաղաքացիների ընդունելության օրերը և ժամերը:

Ավագանու 21.12.2010թ. թիվ 29 որոշմամբ հաստատվել է 2011թ. անասնագլխաքանակի հաշվառման հանձնաժողովի կազմը, ինչը ավագանու իրավասությունը չէ:

2011 թվականի ընթացքում Շիրակամուտ համայնքի ավագանին կայացրել է 3 նիստ, ընդունել է 6 որոշում:

2011 թվականի ընթացքում Շիրակամուտ համայնքի ավագանին իր իրավասությունների սահմաններում.

հաստատել է 2010 թվականի բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունը.

հաստատել է համայնքի խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովի կազմը.

տվել է Հայրենական Մեծ Պատերազմի հուշարձան կոթողի շինարարության համաձայնություն:

Գյուղապետարանում առկա է ցուցատախտակ, ստուգման ժամանակ ցուցատախտակին փակցված էին 2011թ.-ի ավագանու բոլոր որոշումները, համայնքի

ղեկավարի անհատական որոշումները, 2011թ.-ի համար տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը:

ՀՀ կառավարության 11.07.2002 թվականի թիվ 1146-Ն որոշմամբ սահմանված կարգով վարվում է ընդունած իրավական ակտերի հաշվառման մատյաններ, որոշ թերություններով՝ ավագանու մասում լրացված չէ 2011թ.-ի որոշումները, իսկ համայնքի ղեկավարի որոշումների և կարգադրությունների մասում 2011թ. ամբողջովին լրացված չեն:

ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԲՆԱԳԱՎԱՌ

Համայնքի զինապարտների գրանցամատյանի վարման աշխատանքները ընթացքի մեջ են: Մատյանում գրառումներ է կատարվել համայնքում հաշվառված զինապարտների վերաբերյալ ՀՀ ոստիկանության կողմից տրամադրված տվյալների հիման վրա, դեռևս չի վերցվել զինկոմիսարիատի կողմից տրամադրվող տվյալները:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԿԱԴՐԱՅԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՎԱՐՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Իրականացված վարչական վերահսկողության արդյունքում պարզվել է՝

1.ՀՀ տարածքային կառավարման համակարգող նախարարի 2006թ. նոյեմբերի 16-ի N 197-Ա հրամանի N 79 հավելվածով հաստատված Շիրակամուտ գյուղական համայնքի ղեկավարի աշխատակազմի համայնքային ծառայության պաշտոնների անվանացանկի համաձայն աշխատակազմի համայնքային ծառայության պաշտոնները 10-ն են:

2. Համայնքի ղեկավարի 1997թ. փետրվարիի 14-ի թիվ 03 որոշմամբ հաստատվել է աշխատակազմի կանոնադրությունը: Կանոնադրությամբ նախատեսված մի շարք դրույթներ չեն համապատասխանում ՀՀ գործող օրենսդրության պահանջներին: Այս առումով համապատասխան փոփոխություններ պետք է կատարվեն աշխատակազմի կանոնադրությունում:

3. Համայնքի ավագանու 21.12.2010թ. N 31 որոշմամբ հաստատվել է համայնքի ղեկավարի աշխատակազմի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը: Հաստատված հաստիքացուցակը համայնքային ծառայության պաշտոնների մասով համապատասխանում է ՀՀ տարածքային կառավարման համակարգող նախարարի կողմից հաստատված պաշտոնների անվանացանկին:

4. Աշխատակազմի համայնքային ծառայողների անձնական գործերը ընդհանուր առմամբ վարվում են ՀՀ տարածքային կառավարման համակարգող նախարարի 07.11.2006թ. N 20-Ն հրամանով սահմանված համայնքային ծառայողների անձնական գործերը վարելու կարգին համապատասխան, սակայն անձնական գործերի ներքին վերգիրները չեն համապատասխանում կարգի 18-րդ կետի պահանջներին: Վերը նշվածի, ինչպես նաև անձնական գործերում առկա այլ թերությունները վերացնելու համար տրամադրվել է անհրաժեշտ խորհրդատվություն:

5.«Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 3-րդ կետի 9-րդ մասի և «Համայնքային ծառայության մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն համայնքային ծառայողների (բացառությամբ՝ գլխավոր խմբի և առաջատար պաշտոնների առաջին ենթախմբի պաշտոններ զբաղեցնող

համայնքային ծառայողների) նկատմամբ խրախուսման միջոցներ կիրառելու իրավասություն ունի նրան պաշտոնի նշանակելու իրավասություն ունեցող պաշտոնատար անձը՝ այս դեպքում աշխատակազմի քարտուղարը:

Սակայն համայնքի ղեկավարը խախտելով վերոնշյալ օրենքների պահանջները աշխատակազմի բոլոր համայնքային ծառայողների նկատմամբ ինքն է կիրառել խրախուսման միջոցները՝ նրանց հատկացնելով միանվագ դրամական պարգևատրումներ:

6.Աշխատակազմի քարտուղար Հասմիկ Երանոսյանի և գլխավոր մասնագետ Հենրիկ Իգիթխանյանի անձնական գործերում չկար 2008-2010 թվականների գույքի և եկամուտների հայտարարագրերը ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով հարկային մարմնին ներկայացնելու մասին տեղեկանքները: Քարտուղարի և գլխավոր մասնագետի կողմից գույքի և եկամուտների հայտարարագրերը հարկային մարմին ներկայացված լինելու դեպքում անհրաժեշտ է միջոցներ ձեռնարկել կարճ ժամկետում այդ մարմնից վերոնշյալ տեղեկանքները ստանալու և համայնքային ծառայողների անձնական գործերում կցելու համար, հակառակ դեպքում, համաձայն «Համայնքային ծառայության մասին» ՀՀ օրենքի՝ նրանք պետք է ազատվեն զբաղեցրած պաշտոններից:

Հանձնաժողովի նախագահ՝

Ֆին. եւ սոց. տնտ. զարգացման
վարչության պետի տեղակալ

---------- Լ. Բերոյան

Շիրակամուտ համայնքի ղեկավար

---------- Ս. Մազմանյան

Անդամներ՝

ՏԻ եւ ՀԳՄ հարցերով վարչ. ՏԻ եւ
համայնքային ծառ. հարց. բաժնի պետ

---------- Ժ. Ղազարյան

Շիրակամուտ համայնքի ղեկավարի
աշխատակազմի քարտուղար

---------- Հ. Երանոսյան

ՏԻ եւ ՀԳՄ հարցերով վարչ. ՀԳՄՏՍ
գործ. համակարգման բաժնի պետ

---------- Վ. Հովհաննիսյան

Շիրակամուտ համայնքի աշխատակազմի
առաջ. մասնագետ՝ հաշվապահ

---------- Ա. Մազմանյան

Ֆին. եւ սոց. տնտ. զարգ. վարչության
ֆին-տնտ. բաժնի գլխ. մասնագետ

---------- Ա. Բեջանյան

Ակտ

31.05.2011թ. **գ. Մարգահովիտ**

Լոռու մարզի համայնքներում 2011թ. ֆինանսական եւ վարչական հսկողություն իրականացնելու աշխատանքային ծրագրի համաձայն(ՀՀ տարածքային կառավարման նախարարի 2011թ. փետրվարի 14-ի թիվ 20 հրաման, ՀՀ Լոռու մարզպետի 2011թ. փետրվարի 23-ի թիվ 68 կարգադրություն), մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական եւ սոցիալ-տնտեսական զարգացման վարչության պետի տեղակալ Լ. Բերոյանս, ՏԻ եւ ՀԳՄ հարցերով վարչության ՏԻ եւ համայնքային ծառայության հարցերի բաժնի պետ Ժ. Ղազարյանս, ՏԻ եւ ՀԳՄ հարցերով վարչության հանրապետական գործադիր մարմինների տարածքային ստորաբաժանումների գործունեության համակարգման բաժնի պետ Վ. Հովհաննիսյանս, ֆինանսական եւ սոցիալ-տնտեսական զարգացման վարչության ֆինանսատնտեսագիտական բաժնի գլխավոր մասնագետ Ա. Բեջանյանս Մարգահովիտի գյուղապետարանում կատարեցինք ֆինանսական եւ վարչական ստուգում: Ստուգումը ընդգրկում է 2010թ. հունվարի 1-ից 2011թ. ապրիլի 1-ը ընկած ժամանակաշրջանը: Ստուգման աշխատանքներին մասնակցում էին Մարգահովիտ համայնքի ղեկավար Ս. Անանյանը, աշխատակազմի քարտուղար՝ Ս. Գասպարյանը, հաշվապահ՝ Ռ. Զոհրանյանը:

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ

ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ

2010թ. բյուջեով նախատեսված 58075.6հազ. դրամ եկամուտների դիմաց փաստացի մուտքերը կազմել են 57532.4 հազ. դրամ, կամ կատարվել են 99.1%-ով: Սեփական եկամուտները նախատեսված 17562.0 հազ. դրամի դիմաց կազմել է 17018.8 հազ. դրամ, կամ հավաքագրումը կազմել է 96.9%:

Սեփական եկամուտների գծով թերակատարվել են հողի հարկի և գույքահարկի հավաքագրման ցուցանիշները:

2011թ. ապրիլի 1-ի դրությամբ համայնքի բյուջեի եկամուտների կատարման ցուցանիշները նվազել են և կազմել են 97.9%, այդ թվում սեփական եկամուտները հավաքագրվել են 87.9%-ով: Թերակատարվել են գույքահարկի, տեղական տուրքերի և պահուստային հողերի վարձավճարների հավաքագրման ցուցանիշները:

(հազ. դրամ)

Բյուջեի եկամուտներ	**2010թվական**			**Առ 01.04.2011թ.**		
	Նախա-տեսված է	Փաստա-ցի	%	Նախա-տեսված է	Փաստա-ցի	%
1	2	3	4	5	6	7
ՎԱՐՉԱԿԱՆ ԲՅՈՒՋԵ	**58075.6**	**57532.4**	**99.1**	**14922.0**	**14616.5**	**97.9**
Հողի հարկ	9243.6	8146.6	88.1	1529.9	2826.9	184.7
Գույքահարկ	4724.7	3733.8	79.0	1130.0	932.8	82.5
Տեղական տուրք	575.0	630.6	109.7	150.0	56.0	37.3
Պահուստային հողերի վարձավճարներ	2518.7	2722.2	108.1	2148.5	635.4	29.5
Այլ մուտքեր	500.0	1785.6	357.1	50.0	251.8	503.6
Ընդամենը սեփական եկամուտներ	**17562.0**	**17018.8**	**96.9**	**5008.4**	**4402.9**	**87.9**

Պետական բյուջից տրվող դոտացիա	39313.6	39313.6	100.0	9913.6	9913.6	
Անասնաբուժական ծառայություն	1200.0	1200.0	100.0		-	
ՖՈՆԴԱՅԻՆ ԲՅՈՒՋԵ	**3635.6**	**3140.1**	**100.0**	-	-	
Վարչական բյուջեից կատարվող հատկացումներ	3635.6	3140.1	100.0	-	-	
ԸՆԴԱՄԵՆԸ	**58075.6**	**57532.4**	**99.1**	**14922.0**	**14616.5**	**97.9**

2011թ. բյուջեում եկամուտների եռամսյակային բաշխումները կատարվել են ոչ համաչափ, ինչի արդյունքում առաջին եռամսյակում կատարման տոկոսները հողի հարկի գծով կատարվել են 184.7%-ով(առաջին եռամսյակում նախատեսվել է տարեկան հաշվարկի 16%), պահուստային հողերի վարձավճարները՝ 29.5%(առաջին եռամսյակում նախատեսվել է տարեկան հաշվարկի 71.6 %):

Նախորդ տարիներին համայնքի բյուջեի պարբերաբար թերակատարման հետեւանքով կուտակվել են խոշոր չափերի հասնող ապառքներ, որոնք 01.01.2011թ. դրությամբ կազմում են հողի հարկից՝ 42692.5 հազ. դրամ, գույքահարկից՝ 4241.8 հազ. դրամ (շինություններից՝ 752.1 հազ. դրամ, փոխադրամիջոցներից՝ 3489.7 հազ. դրամ), պահուստային հողերի վարձավճարներից՝ 6900.0 հազ. դրամ: Նշված ապառքներից 2011թ. բյուջեում մտցվել է հողի հարկից՝ 1458.5 հազ. դրամ, գույքահարկից՝ 800.0հազ. դրամ, պահուստային հողերի վարձավճարներից՝ 900.0 հազ. դրամ: 2011թ. հողի հարկի տարեկան հաշվարկը կազմել է՝ 7611.9 հազ. դրամ, գույքահարկը՝ 3495.4 հազ. դրամ:

Համայնքի տարածքում գործում է 11 մթերային խանութ, 1 հեղուկ վառելիքի վաճառքի կետ, 1 գազալցակայան: Ալկահոլային խմիչքների վաճառքի թույլտվության համար սահմանվել է տեղական տուրք եռամսյակը 2000 դրամ, ծխախոտի վաճառքի թույլտվության համար՝ եռամսյակը 2000 դրամ, հեղուկ վառելիքի և հեղուկացված գազի վաճառքի թույլտվության համար՝ 150000դրամ: Ստուգման պահին 2011թ. համար տեղական տուրք չէր մուծել <<Վահ-Վաս>> ՍՊԸ-ն, որը չունենալով համապատասխան թույլտվություն վարում է անօրինական գործունեություն: Մեր կողմից տարված բացատրական աշխատանքների արդյունքում ստուգման ընթացքում նրա կողմից մուծել է 150.0 հազ. դրամ տեղական տուրք:

Առևտրի եւ ծառայությունների ոլորտում համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 40-րդ հոդվածի եւ «Առևտրի ու ծառայությունների մասին» ՀՀ օրենքի 17.1 հոդվածի չեն իրականացվել համապատասխան հսկողություն: Ընդունված կարգի համաձայն համայնքի ղեկավարը իրավասու է առեւտրի օբյեկտներում կատարել ստուգումներ և անօրինական գործունեության համար նշանակել համապատասխան տուգանքներ:

ԲՅՈՒՋԵԻ ԾԱԽՍԵՐ

Դրամարկղային ծախսերը 2010թ. նախատեսված 60026.0 հազ. դրամի դիմաց կազմել են 55302.7 հազ. դրամ, որից վարչական բյուջեի ծախս՝ 50311.1 հազ. դրամ, ֆոնդային բյուջե՝ 4991.6 հազ. դրամ: 2011թ. առաջին եռամսյակում դրամարկղային ծախսերը կազմել են 11218.8 հազ. դրամ:

Դրամարկղային ծախսերը 2010թ.-ին և 2011թ. առաջին եռամսյակում

(հազ. դրամ)

Բյուջետային ծախսեր ըստ տնտեսագիտական դասակարգման	2010թ.-ին	2011թ. ապրիլի 1-ի դրությամբ
1	2	3
Ա. Ընթացիկ ծախսեր	***50311.1***	***11263.8***
Աշխատավարձեր և հավելավճարներ	17355.8	3614.8
Պարգևատրումներ և դրամական խրախուսումներ	200.0	219.0
Սոցիալական ապահովության վճարներ	3141.4	691.2
Էներգետիկ ծառայություն	228.8	77.0
Կոմունալ ծառայություններ	972.0	216.0
Կապի ծառայություն	403.4	61.1
Ապահովագրական ծախսեր		32.0
Գույքի և սարքավորումների վարձակալություն	331.1	
Ներքին գործուղումներ	102.8	20.4
Համակարգչային ծառայություններ	95.7	21.6
Տեղեկատվական ծառայություններ	30.0	23.0
Կառավարչական ծառայություններ	360.0	80.0
Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ	299.3	47.9
Մասնագիտական ծառայություններ	95.6	5.3
Ընթացիկ նորոգում և պահպանում	483.8	45.0
Գրասենյակային նյութեր	269.0	45.0
Տրանսպորտային նյութեր	460.0	
Հատուկ նպատակային այլ նյութեր	515.5	248.5
Դրամաշնորհներ	20114.2	5093.0
Սոցիալական օգնություններ	4580.4	700.0
Այլ ծախսեր	272.3	23.0
Բ. Ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսեր	***4991.6***	***184.0***
Շենքերի և շինությունների կառուցում	4941.6	
Վարչական սարքավորումներ	50.0	
ԸՆԴԱՄԵՆԸ	***55302.7***	***11447.8***

Աշխատանքի հաճախումների տաբելները լրացվում են թերություններով: Խախտվել է ՀՀ աշխատանքային օրենսգրքի 147-րդ հոդվածի 1-ին կետի պահանջը, համաձայն որի «ոչ աշխատանքային՝ տոնական եւ հիշատակի օրերի նախօրյակին աշխատանքային օրվա տեւողությունը կրճատվում է մեկ ժամով»:

Աշխատավարձերից պահումները կատարվում են սահմանված կարգով, գումարները վճարվում են ժամանակին: Որոշ դեպքերում խախտելով սահմանված կարգը մի շարք աշխատողների տրվում է իրենց ամսական աշխատավարձից ավել ավանսներ, որը չէր կարող ամբողջությամբ փակվել հաջորդ ամսվա աշխատավարձից և այն փակվել է մի քանի ամսվա ընթացքում:

Արձակուրդային վճարների հաշվարկման ժամանակ առանձին դեպքերում միջին աշխատավարձը հաշվարկվել է ՀՀ աշխատանքային օրենսգրքի 195-րդ հոդված պահանջներին ոչ համապատասխան, ինչի արդյունքում ավել է հաշվարկվել արձակուրդային վճար՝ Ս. Խաչատրյանի՝ 1491 դրամ, Ս. Սարուխանյանին՝ 1904 դրամ, Ա. Բեկչյանին՝ 1144 դրամ, Ա. Խառատյանին՝ 953 դրամ, Տ. Անտինյանին՝ 982 դրամ

01.04.2010թ. մեկ տարով իրավաբանական ծառայություն մատուցելու նպատակով ամսական 40.0 հազ. դրամի չափով պայմանագիր է կնքվել <Լոռի Քոնսալթ> ՍՊԸ-ի հետ, սակայն հարկերի ապառքների գանձման նպատակով հարուցվել է ընդամենը մեկ դատական գործ, որը սակայն ոչ մի արդյունք չի տվել և համայնքի բյուջե լրացուցիչ գումարներ չեն մուտքագրվել: 2011թ. պայմանագրի ժամկետը լրացել է և նոր պայմանագիր չի կնքվել:

Մեկ օրով գործուղումներ մեկնելու ժամանակ հաշվարկվել է յուրաքանչյուր գործուղման համար 720 դրամ օրապահիկի գումար: Խախտվել է ՀՀ կառավարության 24.08.2006թ. թիվ 1422 – Ն <Ծառայողական գործուղման մեկնած աշխատողների գործուղման ծախսերի հատուցման համար կատարվող վճարումների նվազագույն և առավելագույն չափերն ու վճարման կարգը սահմանելու մասին> որոշման պահանջը, համաձայն որի, անկախ հեռավորությունից հիմնական աշխատանքի վայրից մեկնելու և նույն օրը վերադառնալու դեպքում գործուղվող աշխատողին հատուցվում է միայն ճանապարհածախս: Նշված խախտման հետևանքով ավել է հաշվարկվել 38880 դրամ(Ալինա Բեկչյան, Սայադ Խաչատրյան, Չնաշխարհիկ Կիրակոսյան, Սասան Սարուխանյան, Ռ. Ջորիրանյան, Օլգա Բոջուկյան՝ յուրաքանչյուրին 6480 դրամ,):

Երկու-երեք օրով Երևան գործուղվելու դեպքում համաձայն վերը նշված որոշման աշխատողներին պետք է վճարվի յուրաքանչյուր օրվա համար 2000 դրամ օրապահիկի գումար, սակայն վճարվել է 720 դրամ, կամ պակաս է հաշվարկվել Ս. Գասպարյանին՝ 2560 դրամ, Տ. Անտինյանին՝ 3840 դրամ:

ՎԱՐՉԱԿԱՆ ՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ

ԱՎԱԳԱՆՈՒ ԻՐԱՎԱՍՈՒԹՅՈՒՆ

2010 թվականի ընթացքում Մարգահովիտ համայնքի ավագանին կայացրել է 7 նիստ, ընդունել է 38 որոշում: 2 անգամ չի ապահովվել «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի պահանջը՝ 2-րդ նիստը կայացել է 11.04.2010թ.-ին, 3-րդը՝ 21.07.2010թ.-ին, 4-րդը՝ 08.10.2010թ.-ին:

2010 թվականի ընթացքում Մարգահովիտ համայնքի ավագանին իր իրավասությունների սահմաններում.

Հաստատել է 2011 թվականի համայնքի բյուջեն.

հաստատել է 2010 թվականի բյուջեի՝ համայնքի ղեկավարի առաջարկած փոփոխությունները.

հաստատել է 2009 թվականի բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունը.

հաստատել է առևտրի, հասարակական սննդի և սպասարկման ոլորտի գործունեության համայնքային կանոնները (որոշումը ներկայացվել է իրավական փորձաքննության).

2010 և 2011 թվականների համար սահմանել է տեղական տուրքերի և վճարների տեսակներն ու դրույքաչափերը (որոշումները ներկայացվել են իրավական փորձաքննության).

համայնքի ղեկավարի առաջարկությամբ որոշում է կայացրել համայնքի սեփականություն համարվող գույքն օգտագործման տրամադրելու մասին, հաստատել է դրանց մեկնարկային գները.

որոշել է համայնքի ղեկավարի վարձատրության չափը, հաստատել է համայնքի ղեկավարի աշխատակազմի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը.

հաստատել է համայնքային սեփականության գույքագրման փաստաթղթերը.

հաստատել է հողային հաշվեկշիռը.

հաստատել է համայնքի խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովի կազմը.

որոշում է կայացրել համայնքի պատվավոր քաղաքացի կոչումներ շնորհելու մասին:

Համայնքի ավագանուն չի ներկայացվել 2010 թվականի բյուջեի ընթացքի մասին համայնքի ղեկավարի եռամսյակային հաղորդումները:

Թիվ 4-Ա որոշմամբ սահմանվել է ՏԻՄ-երի կողմից քաղաքացիների ընդունելության կազմակերպման կարգը, գյուղապետարանում փակցված է համայնքի ավագանու և համայնքի ղեկավարի կողմից քաղաքացիների ընդունելության օրերը և ժամերը:

2011 թվականի ընթացքում Մարգահովիտ համայնքի ավագանին կայացրել է 2 նիստ, ընդունել է 14 որոշում:

2011 թվականի ընթացքում Մարգահովիտ համայնքի ավագանին իր իրավասությունների սահմաններում.

հաստատել է 2011 թվականի բյուջեի՝ համայնքի ղեկավարի առաջարկած փոփոխությունները.

հաստատել է համայնքի խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովի կազմը.

համայնքի ղեկավարի առաջարկությամբ որոշում է կայացրել համայնքի սեփականություն համարվող գույքն օգտագործման տրամադրելու մասին, հաստատել է դրանց մեկնարկային գները:

24.02.2011թ. թիվ 1 որոշումով 2010 թվականի բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունը հաստատելու փոխարեն ավագանին գնահատել է լավ համայնքի ղեկավարի մեկ տարվա կատարած աշխատանքները: 11.04.2011թ. թիվ 13 որոշումով փոփոխություն է կատարվել 2011թ. թիվ 1 որոշման մեջ՝ «գնահատել լավ» բառերը փոխարինվել է «հաստատել» բառով, և որոշման բովանդակությունը դարձել է «Համայնքի ղեկավարի մեկ տարվա կատարած աշխատանքները հաստատել», որը նույնպես բյուջեի կատարման տարեկան հաշվետվության հաստատում չէ: Նույն թիվ 13 որոշման 2-րդ կետով անվավեր է ճանաչվել ավագանու 24.02.2011թ. թիվ 5 որոշումը, ինչը պետք է արվեր առանձին իրավական ակտով, քանի որ թիվ 1 և թիվ 5 որոշումների բնույթները լիովին տարբեր են: Անհրաժեշտ է թիվ 13 որոշումը անվավեր ճանաչել և առանձին որոշումներով թիվ 1 որոշումը շարադրել նոր խմբագրությամբ, իսկ թիվ 5 որոշումը անվավեր ճանաչել:

Գյուղապետարանում առկա է ցուցատախտակ, ստուգման ժամանակ ավագանու որոշումները փակցված էին ցուցատախտակին:

ՀՀ կառավարության 11.07.2002 թվականի թիվ 1146-Ն որոշմամբ սահմանված կարգով վարվում է ընդունած իրավական ակտերի հաշվառման մատյաններ:

ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԲՆԱԳԱՎԱՌ

Համայնքի զինապարտների գրանցամատյանի վարման աշխատանքները ընթացքի մեջ են: Մատյանում գրառումներ է կատարվել համայնքում հաշվառված զինապարտների վերաբերյալ ՀՀ ոստիկանության կողմից տրամադրված տվյալների հիման վրա, դեռևս չի վերցվել զինկոմիսարիատի կողմից տրամադրվող տվյալները:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԿԱԴՐԱՅԻՆ
ԳՈՐԾԵՐԻ ՎԱՐՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Իրականացված վարչական վերահսկողության արդյունքում պարզվել է՝

1.ՀՀ տարածքային կառավարման համակարգող նախարարի 2006թ. նոյեմբերի 16-ի N 197-Ա հրամանի N 20 հավելվածով հաստատված Մարգահովիտ գյուղական համայնքի ղեկավարի աշխատակազմի համայնքային ծառայության պաշտոնների անվանացանկի համաձայն աշխատակազմի համայնքային ծառայության պաշտոնները 9-ն են:

2.Համայնքի ղեկավարի 2009 թվականի դեկտեմբերի 11-ի N 91 որոշմամբ հաստատվել է աշխատակազմի կանոնադրությունը :

3. Համայնքի ավագանու 24.12.2010թ. N 28 որոշմամբ հաստատվել է համայնքի ղեկավարի աշխատակազմի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը: Հաստատված հաստիքացուցակը համայնքային ծառայության պաշտոնների մասով համապատասխանում է ՀՀ տարածքային կառավարման համակարգող նախարարի կողմից հաստատված պաշտոնների անվանացանկին:

4. Աշխատակազմի համայնքային ծառայողների անձնական գործերը ընդհանուր առմամբ վարվում են ՀՀ տարածքային կառավարման նախարարի 07.11.2006թ. N 20-Ն հրամանով հաստատված համայնքային ծառայողների անձնական գործերը վարելու կարգին համապատասխան, սակայն անձնական գործերում առկա անձնական թերթիկները չեն համապատասխանում կարգի 7-րդ կետի <<զ>> ենթակետի պահանջներին: Վերը նշվածի, ինչպես նաև անձնական գործերում առկա այլ թերությունները վերացնելու համար տրամադրվել է անհրաժեշտ խորհրդատվություն:

5.<<Համայնքային ծառայության մասին>> ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն համայնքային ծառայողների միջև ծառայողական փոխհարաբերությունները կարգավորվում են նաև աշխատանքային կարգապահական ներքին կանոնակարգով, որը հաստատում են համապատասխան համայնքների ղեկավարները՝ ՀՀ կառավարության լիազորած պետական կառավարման մարմնի հաստատած օրինակելի կանոնակարգի հիման վրա:

Համայնքի ղեկավարի 2010թ. հոկտեմբերի 8-ի թիվ 77-Ն որոշմամբ հաստատվել է աշխատակազմի աշխատանքային կարգապահական ներքին կանոնակարգը, որին ծանոթացած լինելու մասին իրենց ստորագրությամբ հավաստել են աշխատակազմի միայն համայնքային ծառայողները:

Այս առումով՝ անհրաժեշտ է ձեռնարկել միջոցներ աշխատակազմի կարգապահական ներքին կանոնակարգը աշխատակազմի բոլոր աշխատակիցներին պատշաճ իրազեկում ապահովելու ուղղությամբ:

6.<<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 3-րդ կետի 9-րդ մասի և <<Համայնքային ծառայության մասին>> ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն համայնքային ծառայողների (բացառությամբ՝ գլխավոր խմբի և առաջատար պաշտոնների առաջին ենթախմբի պաշտոններ զբաղեցնող համայնքային ծառայողների) նկատմամբ խրախուսման միջոցներ կիրառելու իրավասություն ունի նրան պաշտոնի նշանակելու իրավասություն ունեցող պաշտոնատար անձը՝ այս դեպքում աշխատակազմի քարտուղարը:

Սակայն համայնքի ղեկավարը խախտելով վերոնշյալ օրենքների պահանջները աշխատակազմի բոլոր համայնքային ծառայողների նկատմամբ ինքն է կիրառել խրախուսման միջոցները՝ նրանց հատկացնելով միանվագ դրամական պարգևատրումներ:

7. ՀՀ տարածքային կառավարման նախարարության կողմից 2008-2009 թվականներին համայնքի ղեկավարի աշխատակազմի կադրային գործի վարման նկատմամբ իրականացված վերահսկողության ընթացքում հայտնաբերված թերությունների վերացման ուղղությամբ տարվել են զգալի աշխատանքներ, ինչի արդյունքում հայտնաբերված թերությունները ընդհանուր առմամբ վերացվել են:

Հանձնաժողովի նախագահ՝

Ֆին. եւ սոց. տնտ. զարգացման
վարչության պետի տեղակալ

---------- Լ. Բերոյան

Մարգահովիտ համայնքի ղեկավար

---------- Ս. Անանյան

Անդամներ՝

ՏԻ եւ ՀԳՄ հարցերով վարչ. ՏԻ եւ
համայնքային ծառ. հարց. բաժնի պետ

---------- Ժ. Ղազարյան

Մարգահովիտ համայնքի ղեկավարի
աշխատակազմի քարտուղար

---------- Ս. Գասպարյան

ՏԻ եւ ՀԳՄ հարցերով վարչ. ՀԳՄՏՍ
գործ. համակարգման բաժնի պետ

---------- Վ. Հովհաննիսյան

Մարգառվիտ համայնքի աշխ-կազմի
առաջ. մասնագետ՝ հաշվապահ

---------- Ռ. Զոհրանյան

Ֆին. եւ սոց. տնտ. զարգ. վարչության
ֆին-տնտ. բաժնի գլխ. մասնագետ

---------- Ա. Բեջանյան

Ակտ

27.05.2011թ. **գ. Գեղասար**

Լոռու մարզի համայնքներում 2011թ. ֆինանսական եւ վարչական հսկողություն իրականացնելու աշխատանքային ծրագրի համաձայն(ՀՀ տարածքային կառավարման նախարարի 2011թ. փետրվարի 14-ի թիվ 20 հրաման, ՀՀ Լոռու մարզպետի 2011թ. փետրվարի 23-ի թիվ 68 կարգադրություն), մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական եւ սոցիալ-տնտեսական զարգացման վարչության պետի տեղակալ Լ. Բերոյանս, ՏԻ եւ ՀԳՄ հարցերով վարչության ՏԻ եւ համայնքային ծառայության հարցերի բաժնի պետ Ժ. Ղազարյանս, ՏԻ եւ ՀԳՄ հարցերով վարչության հանրապետական գործադիր մարմինների տարածքային ստորաբաժանումների գործունեության համակարգման բաժնի պետ Վ. Հովհաննիսյանս, ֆինանսական եւ սոցիալ-տնտեսական զարգացման վարչության ֆինանսատնտեսագիտական բաժնի գլխավոր մասնագետ Ա. Բեջանյանս Գեղասարի գյուղապետարանում կատարեցինք ֆինանսական եւ վարչական ստուգում: Ստուգումը ընդգրկում է 2010թ. հունվարի 1-ից 2011թ. ապրիլի 1-ը ընկած ժամանակաշրջանը: Ստուգման աշխատանքներին մասնակցում էին Գեղասար համայնքի ղեկավար Ս. Հովհաննիսյանը, աշխատակազմի քարտուղար՝ Ս. Սերոբյանը, հաշվապահ՝ Վ. Մկրտչյանը:

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ

ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ

2010թ. բյուջեով նախատեսված 14170.5 հազ. դրամ եկամուտների դիմաց փաստացի մուտքերը կազմել են 14832.8 հազ. դրամ, կամ կատարվել են 104.7%-ով: Սեփական եկամուտները նախատեսված 3891.3 հազ. դրամի դիմաց կազմել է 4553.6 հազ. դրամ, կամ հավաքագրումը կազմել է 117.0%:

Սեփական եկամուտների գծով թերակատարվել են տեղական տուրքի գանձման ցուցանիշը:

2011թ. ապրիլի 1-ի դրությամբ համայնքի բյուջեի եկամուտների կատարման ցուցանիշը կազմել են 105.0%, այդ թվում սեփական եկամուտները հավաքագրվել են 144.7 %-ով: Թերակատարվել են միայն տեղական տուրքերի հավաքագրման ցուցանիշները:

(հազ. դրամ)

Բյուջեի եկամուտներ	**2010թվական**			**Առ 01.04.2011թ.**		
	Նախա-տեսված է	Փաստա-ցի	%	Նախա-տեսված է	Փաստա-ցի	%
1	2	3	4	5	6	7
ՎԱՐՉԱԿԱՆ ԲՅՈՒՋԵ	**14170,5**	**14832,8**	**104,7**	**3410.0**	**3580.0**	**105.0**
Հողի հարկ	2327,3	2420,7	104,0	373.2	418.1	112.0
Գույքահարկ	750,0	1124,2	149,9	150.0	411.3	274.2
Տեղական տուրք	120,0	80,0	66,7	30.0	-	-
Պահուստային հողերի վարձավճարներ	644,0	688,7	106,9	152.0	155.8	102.5
Այլ մուտքեր	50,0	240,0	480,0	10.0	50.0	500.0
Ընդամենը սեփական եկամուտներ	**3891,3**	**4553,6**	**117,0**	**715.2**	**1035.2**	**144.7**
Պետական բյուջից տրվող դոտացիա	9679,2	9679,2	100,0	2544.8	2544.8	100.0
Անասնաբուժական ծառայություն	600,0	600,0	100,0	150.0	-	-
ՖՈՆԴԱՅԻՆ ԲՅՈՒՋԵ	-	-	-	-	-	-
ԸՆԴԱՄԵՆԸ	**14170,5**	**14832,8**	**104,7**	**3410.0**	**3580.0**	**105.0**

01.01.2011թ. դրությամբ ապառքները կազմել են հողի հարկից՝ 211,4 հազ. դրամ, գույքահարկից՝ 200,0հազ. դրամ: 2011թ. հողի հարկի տարեկան հաշվարկը կազմում է՝ 2230,0 հազ. դրամ, գույքահարկը՝ 700,0 հազ. դրամ:

Համայնքի ղեկավարին առաջարկվել է պարտքեր ունեցող հարկատուների հետ տանել բացատրական աշխատանքներ ապառքները մարելու համար, կազմել պարտքերի մարման ժամանակացույցեր:

Համայնքի տարածքում գործում է 3 առևտրի կետ, որոնք զբաղվում են ծխախոտի և ալկահոլային խմիչքների վաճառքով: Ալկահոլային խմիչքների վաճառքի թույլտվության համար սահմանվել է տեղական տուրք եռամսյակը 1000 դրամ, ծխախոտի վաճառքի թույլտվության համար՝ 1500 դրամ:

2010թ.-ին թերակատարվել են տեղական տուրքերի գանձման ցուցանիշը, իսկ 2011թ. առաջին եռամսյակում ընդհանրապես տեղական տուրքեր չեն գանձվել, կամ տնտեսվարող սուբյեկտները չունենալով ալկահոլային խմիչքների և ծխախոտի վաճառքի համապատասխան թույլտվություններ վարել և վարում են անօրինական գործունեություն: Ստուգման ժամանակ հանդիպել ենք տեղական տուրք չմուծած տնտեսվարող սուբյեկտների հետ, տարվել են համապատասխան բացատրական աշխատանքներ, ինչի արդյունքում գանձվել է 35,0 հազ. դրամ տեղական տուրք, որից 10,0 հազ. դրամը նախորդ տարվա ապառք է, իսկ 25,0 հազ. դրամը գանձվել է ընթացիկ տարվա վաճառքի թույլտվության համար:

Առևտրի և ծառայությունների ոլորտում համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 40-րդ հոդվածի եւ «Առեւտրի ու ծառայությունների մասին» ՀՀ օրենքի 17.1 հոդվածի չեն իրականացվել համապատասխան հսկողություն: Ընդունված կարգի համաձայն համայնքի ղեկավարը իրավասու է առեւտրի օբյեկտներում կատարել ստուգումներ և անօրինական գործունեության համար նշանակել համապատասխան տուգանքներ: Մասնավորապես <Վարչական իրավախախտումների մասին> ՀՀ օրենքի 169 հոդվածի համաձայն առևտրի, հանրային սննդի և կենցաղային ծառայությունների ոլորտում առանց համապատասխան թույլտվության գործունեության իրականացումը առաջացնում է տուգանք ոգելից խմիչքների և ծխախոտի վաճառքի համար՝ 20000-50000 դրամ:

Թույլտվությունների տրման ժամանակ խախտվել է ՀՀ կառավարության 2007թ. հուլիսի 19-ի թիվ 843-Ն որոշման պահանջը՝ չեն ներկայացվել թույլտվության հայտեր, չեն լրացվել սահմանված թույլտվության ձևեր:

ԲՅՈՒՋԵԻ ԾԱԽՍԵՐ

Դրամարկղային ծախսերը 2010թ. նախատեսված հազ. դրամի դիմաց կազմել են 12871.4 հազ. դրամ: 2011թ. առաջին եռամսյակում դրամարկղային ծախսերը կազմել են 2688.9 հազ. դրամ:

Դրամարկղային ծախսերը 2010թ.-ին և 2011թ. առաջին եռամսյակում

(հազ. դրամ)

Բյուջետային ծախսեր ըստ տնտեսագիտական դասակարգման	2010թ.-ին	2011թ. ապրիլի 1-ի դրությամբ
1	2	3
Ա. Ընթացիկ ծախսեր	***12871,4***	***2688.9***
Աշխատավարձեր և հավելավճարներ	6308,5	1503.4
Պարգևատրումներ և դրամական խրախուսումներ	953,0	-

Սոցիալական ապահովության վճարներ	1470,3	325.5
Էներգետիկ ծառայություն	60,0	25.0
Կապի ծառայություն	100,0	20.0
Տեղեկատվական ծառայություններ	36,8	25.0
Մասնագիտական ծառայություններ	600,0	-
Գրասենյակային նյութեր	300,0	75.0
Տրանսպորտային նյութեր	950,0	240.0
Հատուկ նպատակային այլ նյութեր	660,0	110.0
Դրամաշնորհներ(համայնքի դպրոցին)	222,7	-
Սոցիալական օգնություններ	1140,0	350.0
Այլ ծախսեր	70,0	25.0
Բ. Ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսեր	-	-
ԸՆԴԱՄԵՆԸ(Ա+Բ)	***12871,4***	***2688.9***

Աշխատողներին վճարված գումարների (աշխատավարձեր, արձակուրդային վճարներ, դրամական պարգևատրություններ) ընտրանքային ստուգմամբ տարբերություններ չեն հայտնաբերվել:

Աշխատողներին արձակուրդ տրամադրելու հրամանները կամ կարգադրությունները տրվում են ուշացումներով(մարտի 1-ին տրվել է կարգադրություն մարտի 1-ից արձակուրդ տրամադրելու վերաբերյալ), արձակուրդային վճարները վճարվում են ուշացումներով, կամ խախտվել է ՀՀ աշխատանքային օրենսգրքի 169-րդ հոդվածի 2-րդ կետի պահանջը, համաձայն որի ամենամյա արձակուրդային վճարը աշխատողին պետք է վճարել արձակուրդ մեկնելուց առնվազը երեք օր առաջ: Եթե աշխատողին արձակուրդային վճարը վճարվում է ուշացումով, ապա արձակուրդը տեղափոխվում է այնքան օրով, որքան օրով ուշացվել է վճարումը, և երկարաձգված ժամանակի համար վճարումը կատարվում է այնպես, ինչպես ամենամյա արձակուրդի համար:

2010թ. հունվարի 21-ից փետրվարի 26-ը գյուղապետի կարգադրությամբ 32 օրացուցային օր արձակուրդ է տրամադրվել Գ. Բաղդասարյանին: Նշված դեպքում Գ. Բաղդասարյանին արձակուրդ պետք է տրամադրվեր աշխատակազմի քարտուղարի հրամանի հիման վրա, սխալ է հաշվարկված նաև արձակուրդի օրերի տևողությունը(32օրվա փոխարեն տրամադրվել է 37օր, սակայն վճարվել է 32 օրվա համար):

ՎԱՐՉԱԿԱՆ ՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ

ԱՎԱԳԱՆՈՒ ԻՐԱՎԱՍՈՒԹՅՈՒՆ

2010 թվականի ընթացքում Գեղասար համայնքի ավագանին կայացրել է 13 նիստ, ընդունել է 18 որոշում:

2010 թվականի ընթացքում Գեղասար համայնքի ավագանին իր իրավասությունների սահմաններում.

հաստատել է 2011 թվականի համայնքի բյուջեն.

հաստատել է 2010 թվականի բյուջեի՝ համայնքի ղեկավարի առաջարկած փոփոխությունները.

ի գիտություն է ընդունել 2010 թվականի բյուջեի ընթացքի մասին համայնքի ղեկավարի III եռամսյակի հաղորդումը.

2011 թվականի համար սահմանել է տեղական տուրքերի և վճարների տեսակներն ու դրույքաչափերը (որոշումը ներկայացվել է իրավական փորձաքննության).

համայնքի ղեկավարի առաջարկությամբ որոշում է կայացրել համայնքի սեփականություն համարվող գույքն օտարելու մասին, հաստատել է դրանց մեկնարկային գները.

հաստատել է համայնքային սեփականության գույքագրման փաստաթղթերը.

հաստատել է հողային հաշվեկշիռը.

հաստատել է համայնքի ղեկավարի աշխատակազմի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը.

հաստատել է համայնքի ղեկավարի աշխատավարձի չափը.

Ավագանուն չի ներկայացվել 2010 թվականի բյուջեի ընթացքի մասին համայնքի ղեկավարի I և II եռամսյակների հաղորդումները:

Թիվ 1-Ա որոշմամբ սահմանվել է ՏԻՄ-երի կողմից քաղաքացիների ընդունելության կազմակերպման կարգը, գյուղապետարանում փակցված է համայնքի ավագանու և համայնքի ղեկավարի կողմից քաղաքացիների ընդունելության օրերը և ժամերը:

2011 թվականի ընթացքում համայնքի ավագանին կայացրել է 3 նիստ, ընդունել է 6 որոշում:

2011 թվականի ընթացքում համայնքի ավագանին իր իրավասությունների սահմաններում.

հաստատել է 2010թվականի բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունը.

հաստատել է 2011թվականի բյուջեի՝ համայնքի ղեկավարի առաջարկած փոփոխությունները.

ի գիտություն է ընդունել 2011թվականի բյուջեի ընթացքի մասին համայնքի ղեկավարի I եռամսյակի հաղորդումը.

հաստատել է համայնքի խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովի կազմը.

համայնքի ղեկավարի առաջարկությամբ որոշում է կայացրել համայնքի սեփականություն համարվող գույքը կառուցապատելու նպատակով օտարելու մասին:

Գյուղապետարանում առկա է ցուցատախտակ, ստուգման ժամանակ ավագանու որոշումներ տախտակին փակցված չէին: Առաջարկվել է համայնքի ավագանու որոշումները փակցնել ցուցատախտակին, տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը սահմանող որոշումը և որոշման հավելվածը փակցրած պահել տարվա ընթացքում, ինչպես նաև ավագանու նստավայրում (գյուղապետարանում) փակցնել համայնքի ղեկավարի անհատական որոշումները:

Պետք է նշել, որ յուրաքանչյուր որոշման համար կազմվել է առանձին նիստի արձանագրություն, չնայած նրա, որ կան որոշումներ որոնք քննարկվել են նույն օրը, այսինքն նույն նիստի ժամանակ: Անհրաժեշտ է մեկ նիստի բոլոր օրակարգային հարցերի համար կազմել մեկ արձանագրություն:

ՀՀ կառավարության 11.07.2002 թվականի թիվ 1146-Ն որոշմամբ սահմանված կարգով վարվում է ընդունած իրավական ակտերի հաշվառման մատյաններ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԿԱԴՐԱՅԻՆ
ԳՈՐԾԵՐԻ ՎԱՐՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

1.ՀՀ տարածքային կառավարման համակարգող նախարարի 2006թ. նոյեմբերի 16-ի N 197-Ա հրամանի N 20 հավելվածով հաստատված Գեղասար գյուղական համայնքի ղեկավարի աշխատակազմի համայնքային ծառայության

պաշտոնների անվանացանկի համաձայն աշխատակազմի համայնքային ծառայության պաշտոնները 6-ն են:

2.Համայնքի ղեկավարի 2010թ. մարտի 1-ի թիվ 18 որոշմամբ հաստատվել է աշխատակազմի կանոնադրությունը:

3. Համայնքի ավագանու 20.12.2010թ. N15 որոշմամբ հաստատվել է համայնքի ղեկավարի աշխատակազմի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը: Հաստատված հաստիքացուցակը համայնքային ծառայության պաշտոնների մասով համապատասխանում է ՀՀ տարածքային կառավարման համակարգող նախարարի կողմից հաստատված պաշտոնների անվանացանկին:

4. Աշխատակազմի համայնքային ծառայողների անձնական գործերը ընդհանուր առմամբ վարվում են ՀՀ տարածքային կառավարման նախարարի 07.11.2006թ. N 20-Ն հրամանով հաստատված համայնքային ծառայողների անձնական գործերը վարելու կարգին համապատասխան, սակայն բոլոր անձնական գործերում չկար ՀՀ կառավարությանն առընթեր ՀՀ ոստիկանության կողմից տրամադրվող դատվածության բացակայության մասին տեղեկանքը, անձնական գործերի ներքին վերգիրները չեն համապատասխանում կարգի 18-րդ կետի պահանջներին: Վերը նշվածի, ինչպես նաև անձնական գործերում առկա այլ թերությունները վերացնելու համար տրամադրվել է անհրաժեշտ խորհրդատվություն:

5.<<Համայնքային ծառայության մասին>> ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն համայնքային ծառայողների միջև ծառայողական փոխհարաբերությունները կարգավորվում են նաև աշխատանքային կարգապահական ներքին կանոնակարգով, որը հաստատում են համապատասխան համայնքների ղեկավարները՝ ՀՀ կառավարության լիազորած պետական կառավարման մարմնի հաստատած օրինակելի կանոնակարգի հիման վրա:

Համայնքի ղեկավարի 2010 թվականի դեկտեմբերի 21-ի N 81-Ն որոշմամբ հաստատվել է աշխատակազմի աշխատանքային կարգապահական ներքին կանոնակարգը:

Այս առումով՝ անհրաժեշտ է ձեռնարկել միջոցներ աշխատակազմի կարգապահական ներքին կանոնակարգը աշխատակազմի բոլոր աշխատակիցներին պատշաճ իրազեկումն ապահովելու ուղղությամբ:

6.<<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 3-րդ կետի 9-րդ մասի և <<Համայնքային ծառայության մասին>> ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն համայնքային ծառայողների (բացառությամբ՝ գլխավոր խմբի և առաջատար պաշտոնների առաջին ենթախմբի պաշտոններ զբաղեցնող համայնքային ծառայողների) նկատմամբ խրախուսման միջոցներ կիրառելու իրավասություն ունի նրան պաշտոնի նշանակելու իրավասություն ունեցող պաշտոնատար անձը՝ այս դեպքում աշխատակազմի քարտուղարը:

Սակայն համայնքի ղեկավարը խախտելով վերոնշյալ օրենքների պահանջները աշխատակազմի բոլոր համայնքային ծառայողների նկատմամբ ինքն է կիրառել խրախուսման միջոցները՝ նրանց հատկացնելով միանվագ դրամական պարգևատրումներ:

7.ՀՀ տարածքային կառավարման նախարարի 29.08.2006թ. N 13-Ն հրամանով հաստատված համայնքային ծառայության թափուր պաշտոն զբաղեցնելու համար մրցույթ անցկացնելու կարգի 16-րդ կետի համաձայն՝ աշխատակազմում պետք է վարվի մրցույթներին մասնակցելու համար դիմած քաղաքացիների տվյալների մատյան, ինչը աշխատակազմում բացակայում էր: Այս

առումով անհրաժեշտ է աշխատակազմում ստեղծել և սահմանված կարգով վարել վերը նշված մատյանը:

8.Համայնքի ղեկավարի 2009թ. փետրվարի 17-ի թիվ 04 որոշմամբ հաստատվել է համայնքային ծառայության մրցութային և ատեստավորման հանձնաժողովների կազմը և ուժը կորցրած է ճանաչվել համայնքի ղեկավարի 30.11.2006թ. թիվ 24 կարգադրությունը: << Իրավական ակտերի մասին>> ՀՀ օրենքի 71-րդ հոդվածի համաձայն՝ իրավական ակտի գործողության դադարեցումն իրավական ակտն ընդունած մարմինը կատարում է նույն տեսակի իրավական ակտով:Այս առումով<< Իրավական ակտերի մասին>> ՀՀ օրենքին համապատասխան անհրաժեշտ է վերանայել համայնքի ղեկավարի վերոնշյալ որոշումը:

9.Աշխատակազմի քարտուղար Սամվել Սերոբյանի անձնական գործում չկար 2008թվականի գույքի և եկամուտների հայտարարագիրը ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ներկայացնելու մասին տեղեկանքը: Քարտուղարի կողմից գույքի և եկամուտների հայտարարագրերը հարկային մարմին ներկայացված լինելու դեպքում անհրաժեշտ է միջոցներ ձեռնարկել կարճ ժամկետում այդ մարմնից վերոնշյալ տեղեկանքը ստանալու և համայնքային ծառայողի անձնական գործին կցելու համար, հակառակ դեպքում, համաձայն <<Համայնքային ծառայության մասին>> ՀՀ օրենքի՝ նա պետք է ազատվի զբաղեցրած պաշտոնից:

Հանձնաժողովի նախագահ՝

Ֆին. եւ սոց. տնտ. զարգացման վարչության պետի տեղակալ

---------- Լ. Բերոյան

Գեղասար համայնքի ղեկավար

---------- Ս. Հովհաննիսյան

Անդամներ՝

ՏԻ եւ ՀԳՄ հարցերով վարչ. ՏԻ եւ համայնքային ծառ. հարց. բաժնի պետ

---------- Ժ. Ղազարյան

Գեղասար համայնքի ղեկավարի աշխատակազմի քարտուղար

---------- Ս. Սերոբյան

ՏԻ եւ ՀԳՄ հարցերով վարչ. ՀԳՄՏՍ գործ. համակարգման բաժնի պետ

---------- Վ. Հովհաննիսյան

Գեղասար համայնքի աշխ-կազմի առաջ. մասնագետ՝ հաշվապահ

---------- Վ. Մկրտչյան

Ֆին. եւ սոց. տնտ. զարգ. վարչության ֆին-տնտ. բաժնի գլխ. մասնագետ

---------- Ա. Բեջանյան

Ակտ

16.06.2011թ. **գ. Ձորագետ**

Լոռու մարզի համայնքներում 2011թ. ֆինանսական եւ վարչական հսկողություն իրականացնելու աշխատանքային ծրագրի համաձայն(ՀՀ տարածքային կառավարման նախարարի 2011թ. փետրվարի 14-ի թիվ 20 հրաման, ՀՀ Լոռու մարզպետի 2011թ. փետրվարի 23-ի թիվ 68 կարգադրություն), մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական եւ սոցիալ-տնտեսական զարգացման վարչության պետի տեղակալ Լ. Բերոյանս, ՏԻ եւ ՀԳՄ հարցերով վարչության ՏԻ եւ համայնքային ծառայության հարցերի բաժնի պետ Ժ. Ղազարյանս, ՏԻ եւ ՀԳՄ հարցերով վարչության հանրապետական գործադիր մարմինների տարածքային ստորաբաժանումների գործունեության համակարգման բաժնի պետ Վ. Հովհաննիսյանս, ֆինանսական եւ սոցիալ-տնտեսական զարգացման վարչության ֆինանսատնտեսագիտական բաժնի գլխավոր մասնագետ Ա. Բեջանյանս Ձորագետի գյուղապետարանում կատարեցինք ֆինանսական եւ վարչական ստուգում: Ստուգումը ընդգրկում է 2010թ. հունվարի 1-ից 2011թ. ապրիլի 1-ը ընկած ժամանակաշրջանը: Ստուգման աշխատանքներին մասնակցում էին Ձորագետ համայնքի ղեկավար Լ. Գրիգորյանը, հաշվապահ՝ Կ. Շերմազանյանը:

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ

2010թ. բյուջեով նախատեսված 4841.7 հազ. դրամ եկամուտների դիմաց փաստացի մուտքերը կազմել են 4743.7 հազ. դրամ, կամ կատարվել են 98.0%-ով: Սեփական եկամուտները նախատեսված 1341.7 հազ. դրամի դիմաց կազմել է 1243.7 հազ. դրամ, կամ հավաքագրումը կազմել է 92.7%:

Սեփական եկամուտների գծով թերակատարվել են այլ եկամուտների գանձման ցուցանիշը:

2011թ. ապրիլի 1-ի դրությամբ համայնքի բյուջեի եկամուտների կատարման ցուցանիշը նվազել և կազմել է 87.5%, այդ թվում սեփական եկամուտները հավաքագրվել են 67.1%-ով:

(հազ. դրամ)

Բյուջեի եկամուտներ	**2010թվական**			**Առ 01.04.2011թ.**		
	Նախատեսված է	Փաստացի	%	Նախատեսված է	Փաստացի	%
1	2	3	4	5	6	7
ՎԱՐՉԱԿԱՆ ԲՅՈՒՋԵ	**4841.7**	**4743.7**	**98.0**	**1413.0**	**1236.1**	**87.5**
Հողի հարկ	126.9	127.5	100.4	35.0	54.0	154.2
Գույքահարկ	523.6	524.9	100.2	249.0	185.0	74.3
Տեղական տուրք	495.0	495.0	100.0	250.0	110.0	44.0
Այլ եկամուտներ	196.2	96.3	49.1	4.0	12.1	302.5
Ընդամենը սեփական եկամուտներ	**1341.7**	**1243.7**	**92.7**	**538.0**	**361.1**	**67.1**
Պետական բյուջից տրվող դոտացիա	3500.0	3500.0	100.0	875.0	875.0	100.0
ՖՈՆԴԱՅԻՆ ԲՅՈՒՋԵ	-	-	-	-	-	-
ԸՆԴԱՄԵՆԸ	**4841.7**	**4743.7**	**98.0**	**1413.0**	**1236.1**	**87.5**

Ոչ ֆինանսական ակտիվների իրացումից մուտքերը կազմել են 4296.0 հազ. դրամ, այդ թվում՝ հողի իրացումից մուտքեր՝ 4176.0 հազ. դրամ, այլ հիմնական միջոցների իրացումից մուտքեր՝ 120.0 հազ. դրամ:

Դրամարկղային ծախսերը 2010թ. կազմել են 5206.7 հազ. դրամ, 2011թ. առաջին եռամսյակում՝ 4961.7 հազ. դրամ:

Դրամարկղային ծախսերը 2010թ.-ին և 2011թ. առաջին եռամսյակում

(հազ. դրամ)

Բյուջետային ծախսեր ըստ տնտեսագիտական դասակարգման	2010թ.-ին	2011թ. ապրիլի 1-ի դրությամբ
1	2	3
Ա. Ընթացիկ ծախսեր	***4716.7***	***1129.7***
Աշխատավարձեր և հավելավճարներ	3228.6	762.0
Պարգևատրումներ և դրամական խրախուսումներ	205.0	
Սոցիալական ապահովության վճարներ	685.1	162.3
Ներքին գործուղումներ	20.0	5.4
Վարչական ծառայություններ	60.0	
Տեղեկատվական ծառայություններ	32.0	
Գրասենյակային նյութեր	100.0	50.0
Տրանսպորտային նյութեր	150.0	90.0
Հատուկ նպատակային այլ նյութեր		30.0
Սոցիալական օգնություններ	236.0	30.0
Բ. Ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսեր	***490.0***	***3832.0***
Տրանսպորտային սարքավորումներ	490.0	*2898.5*
Վարչական սարքավորումներ		933.5
ԸՆԴԱՄԵՆԸ(Ա+Բ)	***5206.7***	***4961.7***

Աշխատողներին վճարված գումարների (աշխատավարձեր, արձակուրդային վճարներ, դրամական պարգևատրություններ, գործուղման գումարներ) ընտրանքային ստուգմամբ տարբերություններ և խախտումներ չեն հայտնաբերվել:

Համայնքի տարածքում գործում է 4 հասարակական սննդի օբյեկտներ և 1 հեղուկ վառելիքի վաճառքի կետ: Ալկահոլային խմիչքների վաճառքի թույլտվության համար սահմանվել է տեղական տուրք եռամսյակը 7500 դրամ, ծխախոտի վաճառքի թույլտվության համար՝ 7500 դրամ, հեղուկ վառելիքի վաճառքի թույլտվության համար՝ 200000 դրամ, ժամը 24.00-ից հետո աշխատելու թույլտվության համար՝ 100000 դրամ:

2011թ. երեք հասարակական սննդի օբյեկտներ չեն վճարել 15000-ական դրամ տեղական տուրք և չունենալով համապատասխան թույտվություն վարել և վարում են անօրինական գործունեություն /ա/ձ Ռազմիկ Պետրոսյան, ա/ձ Անթառամ Մելիքյան, ա/ձ Գարիկ Գալոյան:

Առևտրի և ծառայությունների ոլորտում համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 40-րդ հոդվածի եւ «Առևտրի ու ծառայությունների մասին» ՀՀ օրենքի 17.1 հոդվածի չեն իրականացվել համապատասխան հսկողություն: Ընդունված կարգի համաձայն համայնքի ղեկավարը իրավասու է առևտրի օբյեկտներում կատարել ստուգումներ և անօրինական գործունեության համար նշանակել համապատասխան տուգանքներ: Մասնավորապես «Վարչական իրավախախտումների մասին» ՀՀ օրենքի 169 հոդվածի համաձայն առևտրի, հանրային սննդի և կենցաղային ծառայությունների ոլորտում առանց համապատասխան թույլտվության գործունեության իրականացումը առաջացնում է տուգանք ոգելից խմիչքների և ծխախոտի վաճառքի համար՝ 20000-50000 դրամ:

2011թվականին 2898.5 հազ. դրամով ձեռք է բերվել 1997թ. արտադրության «ՕՊԵԼ ՎԵԿՏՐԱ» մակնիշի նոր ծառայողական ավտոմեքենա: Համայնքի

հաշվեկշռում առկա է նաև ՎԱԶ 21-05 մակնիշի ծառայողական ավտոմեքենա, որը համաձայն գյուղապետի հայտարարության գտնվում է անսարք վիճակում: Համայնքի ղեկավարին առաջարկվել է ավտոմեքենաներից մեկը սահմանված կարգով օտարել և համայնքի բյուջե մուտքագրված գումարները ուղղել համայնքային հիմնախնդիրների լուծմանը:

ՎԱՐՉԱԿԱՆ ՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ

ԱՎԱԳԱՆՈՒ ԻՐԱՎԱՍՈՒԹՅՈՒՆ

2010թվականի ընթացքում համայնքի ավագանին կայացրել է 8 նիստ, ընդունել է 16 որոշում: 2 անգամ չի ապահովվել «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի պահանջը՝ 1-ին նիստը կայացել է 10.02.2010թ.-ին, 2-րդը՝ 20.04.2010թ.-ին, 3-րդը՝ 10.07.2010թ.-ին:

2010 թվականի ընթացքում համայնքի ավագանին իր իրավասությունների սահմաններում.

Հաստատել է 2011թվականի համայնքի բյուջեն.

հաստատել է 2010թվականի բյուջեի՝ համայնքի ղեկավարի առաջարկած փոփոխությունները.

հաստատել է 2009թվականի բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունը.

ի գիտություն է ընդունել 2010 թվականի բյուջեի ընթացքի մասին համայնքի ղեկավարի եռամսյակային հաղորդումները.

հաստատել է առևտրի, հասարակական սննդի և սպասարկման ոլորտի գործունեության համայնքային կանոնները (որոշումը ներկայացվել է իրավական փորձաքննության).

2010 և 2011թվականների համար սահմանել է տեղական տուրքերի և վճարների տեսակներն ու դրույքաչափերը (որոշումները ներկայացվել են իրավական փորձաքննության).

համայնքի ղեկավարի առաջարկությամբ որոշում է կայացրել համայնքի սեփականություն համարվող գույքն օտարելու մասին մասին, հաստատել է դրանց օտարման պայմանները.

որոշել է համայնքի ղեկավարի վարձատրության չափը, հաստատել է համայնքի ղեկավարի աշխատակազմի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը.

հաստատել է համայնքային սեփականության գույքագրման փաստաթղթերը.

հաստատել է հողային հաշվեկշիռը:

Թիվ 3-Ա որոշմամբ սահմանվել է ՏԻՄ-երի կողմից քաղաքացիների ընդունելության կազմակերպման կարգը, գյուղապետարանում փակցված է համայնքի ավագանու և համայնքի ղեկավարի կողմից քաղաքացիների ընդունելության օրերը և ժամերը:

2011թվականի ընթացքում համայնքի ավագանին կայացրել է 3 նիստ, ընդունել է 8 որոշում:

2011թվականի ընթացքում համայնքի ավագանին իր իրավասությունների սահմաններում.

հաստատել է 2011 թվականի բյուջեի՝ համայնքի ղեկավարի առաջարկած փոփոխությունները.

հաստատել է 2010 թվականի բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունը.

հաստատել է համայնքի խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովի կազմը.

համայնքի ղեկավարի առաջարկությամբ որոշում է կայացրել համայնքի սեփականություն համարվող գույքն օգտագործման տրամադրելու մասին, հաստատել է դրա տրամադրելու պայմանները.

ՀՀ արդարադատության նախարարության գրության հիման վրա անվավեր է ճանաչել համայնքի ավագանու 20.12.2010թ. թիվ 12-Ն որոշումը և 2011թվականների համար սահմանել է տեղական տուրքերի և վճարների տեսակներն ու դրույքաչափերը (որոշումը ներկայացվել են իրավական փորձաքննության).

Գյուղապետարանում առկա է ցուցատախտակ, ստուգման ժամանակ ավագանու որոշումները փակցված էին ցուցատախտակին:

ՀՀ կառավարության 11.07.2002 թվականի թիվ 1146-Ն որոշմամբ սահմանված կարգով վարվում է ընդունած իրավական ակտերի հաշվառման մատյաններ:

ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԲՆԱԳԱՎԱՌ

Համայնքի զինապարտների գրանցամատյանի վարման աշխատանքները ընթացքի մեջ են: Մատյանում գրառումներ է կատարվել համայնքում հաշվառված զինապարտների վերաբերյալ ՀՀ ոստիկանության կողմից տրամադրված տվյալների հիման վրա, դեռևս չի վերցվել զինկոմիսարիատի կողմից տրամադրվող տվյալները:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԿԱՌՈՒՑԻՆ
ԳՈՐԾԵՐԻ ՎԱՐՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Իրականացված վարչական վերահսկողության արդյունքում պարզվել է՝

1.ՀՀ տարածքային կառավարման համակարգող նախարարի 2006թ. նոյեմբերի 16-ի N 197-Ա հրամանի N 57 հավելվածով հաստատված Ձորագետ գյուղական համայնքի ղեկավարի աշխատակազմի համայնքային ծառայության պաշտոնների անվանացանկի համաձայն աշխատակազմի համայնքային ծառայության պաշտոնները 3-ն են:

2. Համայնքի ղեկավարի 2010թ. մարտի 15-ի թիվ 08-Ա որոշմամբ հաստատվել է աշխատակազմի կանոնադրությունը :

3. Համայնքի ավագանու 20.12.2010թ. N 13-Ա որոշմամբ հաստատվել է համայնքի ղեկավարի աշխատակազմի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը: Հաստատված հաստիքացուցակը համայնքային ծառայության պաշտոնների մասով համապատասխանում է ՀՀ տարածքային կառավարման համակարգող նախարարի կողմից հաստատված պաշտոնների անվանացանկին:

4. Աշխատակազմի համայնքային ծառայողների անձնական գործերը ընդհանուր առմամբ վարվում են ՀՀ տարածքային կառավարման նախարարի 07.11.2006թ. N 20-Ն հրամանով հաստատված համայնքային ծառայողների անձնական գործերը վարելու կարգին համապատասխան, սակայն անձնական գործերի ներքին վերգիրների գրառումները թերի են կատարվել և չեն համապատասխանում կարգի 18-րդ կետի պահանջներին: Վերը նշվածի, ինչպես

նաև անձնական գործերում առկա այլ թերությունները վերացնելու համար տրամադրվել է անհրաժեշտ խորհրդատվություն:

5.«Համայնքային ծառայության մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի համաձայն համայնքային ծառայության մրցութային և ատեստավորման հանձնաժողովների աշխատակարգերը հաստատում են համապատասխան համայնքների ղեկավարները՝ ՀՀ կառավարության լիազորած պետական կառավարման մարմնի հաստատած մրցութային և ատեստավորման հանձնաժողովների օրինակելի աշխատակարգի հիման վրա:

ՀՀ տարածքային կառավարման համակարգող նախարարի 2006թ. սեպտեմբերի 19-ի N 12-Ն հրամանով հաստատվել է մրցութային և ատեստավորման հանձնաժողովների օրինակելի աշխատակարգերը, սակայն մինչև 28.04.2009թ. համայնքի ղեկավարի կողմից չի հաստատվել մրցութային և ատեստավորման հանձնաժողովների աշխատակարգերը: Համայնքի ղեկավարի 2009 թվականի ապրիլի 28-ի N 12 որոշմամբ հաստատվել է աշխատակարգերը և ուժը կորցրած է ճանաչվել համայնքի ղեկավարի 21.04.2008թ. մրցութային և ատեստավորման հանձնաժողովների կազմը հաստատելու մասին N 42 որոշումը:

Այս առումով՝ անհրաժեշտ է ուժը կորցրած է ճանաչել համայնքի ղեկավարի 21.04.2008թ. N 42 որոշման 2-րդ կետը:

Ակտը կազմվել է երեք օրինակից, որից մեկը տրվել է համայնքի ղեկավարին:

Հանձնաժողովի նախագահ՝

Ֆին. եւ սոց. տնտ. զարգացման
վարչության պետի տեղակալ

---------- Լ. Բերոյան

Զորագետ համայնքի ղեկավար

---------- Լ. Գրիգորյան

Անդամներ՝

ՏԻ եւ ՀԳՄ հարցերով վարչ. ՏԻ եւ
համայնքային ծառ. հարց. բաժնի պետ

---------- Ժ. Ղազարյան

Զորագետ համայնքի
աշխատակազմի առաջատար
մասնագետ, հաշվապահ

---------- Կ. Շերմազանյան

ՏԻ եւ ՀԳՄ հարցերով վարչ. ՀԳՄՏՍ
գործ. համակարգման բաժնի պետ

---------- Վ. Հովհաննիսյան

Ֆին. եւ սոց. տնտ. զարգ. վարչության
ֆին-տնտ. բաժնի գլխ. մասնագետ

---------- Ա. Բեջանյան